 ցաւ նմա՝ ի նձնէ ընտրել կամ
 զաւողջութի կամ զՏինդանդութի, եւ
 պնդանի՝ յօժարաւորոյթ սրտիւ՝ վա-
 վաքեմ՝ զի մի՛ արասցես զկամս
 իմ, այլ՝ զքոյդ. և այնպէ վայելէր
 յանդորր խաղաղութե և ՚ի խնդա-
 միտ ուրախութե, զի որ գիտէ զնձ
 թէ իւր ունել, զայլ նմ՝ ինչ աւ-
 ոչինչ դնէ, ածել զմտաւ՝ թէ
 կամբք նք է ամենաբարի և ամե-
 նազօր, և բզմբ բարութիս թէ իւր
 բերէ. և այնպիսին ամենեկին ՚ի
 կամս նք հանդուցել՝ ասէ թէ սաղ-
 մոսերգունին՝ * խաղաղութե յայս և
 ՚ի սոյն ննջեցից և հանգեայց || .
 և թէ ոգոսաւինոսի ՚ի զիրս խոստո՞ .
 գլ՝ ն. * արարեր զմեզ նր՝ վնքո,
 և անհանգիստ է սիրտ մեր, մինչև
 հանգեցէ ՚ի քեզ || . վնջի նձ է
 նմ բարի, որով և մի միայն քաղց-

բորակ մխիթարուի և հանգիստ
 և նպատակ հոգւոյ՝ որ կանգաւ
 զէտլ յիւծ իբրև յակաստանի էկցս
 բոլորից՝ զմի միայն զիւծ ամուս-
 անք ՚ի վերոյ ք զամ և ՚ի ներքս
 յինքն զբաղձանս իւր և զայլ ամ
 ինչ նշմարէ, և ուն թէ յիւծ հան-
 դուցել զազարէ, և ՚ի կամս ուն
 իբր ՚ի ծոց նր դրգել հանգարտէ :
 21. Աւարդ՝ յետ այսորիկ հա-
 յեսցուք ՚ի բնաբանն որ յառա-
 ջիկայդ : Օհաց մեր հանապա-
 զորդ անը մեզ այսօր : Այս է
 շորբորդ հայցունած . քղի ՚ի յու-
 ընթաց երիս հայցունածս մալթե-
 ցաք զայնս՝ որ հայէին ՚ի պատիւ
 ուն, այժմ ՚ի դէպ զայ մեզ յայսմ
 ուն և յերիս հետապայս հայցել
 զորս պատշաճին մեզ և նախ
 առաջին՝ զհաց մեր՝ զառ ՚ի յոն
 պատրաստեալն մն մեր միկան, և
 ոչ հրեշտակաց կանանոց, և ոչ
 իսկ զօտարին կմ զյախշտակեալն,
 այլ՝ մերովք վաստակովք տրովք՝

ողորմուի կի՛մ այլով ի՛նչք 'ի մո՛նէ
 տունեալ կի՛մ տալի : Ասկեքերան
 զայս հայցունա՛ծ միայարէ ի նախ
 ընթացին այսմ , քո՛ հրամայեաց
 մեզ խնդրել , զի կտրեցին կամք
 մյ 'ի մէնջ , ուն կատարին 'ի հրեշ
 տակաց , բայց ո՛չ միօրինակ . քզի
 մեք պէտս ունիմք հացի , զի եմք
 մահկանացու և դիւրամասելի .
 իսկ հրեշտակք և ո՛չ բնաւ , զի են
 անմահ և անախտակիր . յորմէ
 յայտ է՝ թէ մյ մուրացիկ են մմ'
 միդիկ ևս և մեծատունք իշխանք
 և թիւրք անգամ , և զօրհանա
 տազ 'ի նմանէ մուրան հաց , զի
 զնր օրինակ մծ զամս քառատուն
 որդւոցն իէլի տեղայր յերկնից
 զմանանայն յանապատի հանապազ ,
 և նովաւ կերակրէր զվեց հազար
 միդիկ . սոյնմ յորժմ հանապազօր
 նստիմք 'ի սեղան , իւրաքանչիւր
 ումեք ուն թէ տեղայ մծ կերա
 կուր յերկնից . վնյ դաւիթ թէմ
 և թիւր էր , ասէր՝ * ես ազքատ

և անանկ եմ ամ խորհեան զիս ॥ •
 տաղ ॥ Վժ. ՚ի վերջն. ապա ամենե-
 քին մուրող գոլով կացել առ
 դրան ամային շնորհաց ասեմք՝
 զհաց մեր հանապազորդ տուր մեզ
 այսօր :

22. Քայց ատո արժան համարիմք
 զիւրաքանչիւր բառ բնաբանիս մի
 ըստ միողէ զննել. ասի՝ մեր • քղե
 հացն նոյ է՝ ըստ պարզե նր գոլոյն,
 և մեր՝ զի ՚ի նմանէ ընդունիմք
 զայն. իսկ ոսկեբերան ասէ՝ * որ
 զարդարուք ստացեալն ուտէ,
 զիւրն ճաշակէ հաց, քայց որ զնե-
 ղօքն՝ զօտարին ուտէ ॥ • ասի՝ հա-
 նապազորդ. այս բառ ՚ի լատին
 թարգմանուէ այլազգ գնի. վնդե
 անդ ըստ նոյ ասի՝ supersubstan-
 tialis սուբէստանտիանցիանիս՝ որ
 թարգմանի՝ գեր քան զգոյացուի
 կ՝ գերգոյացական. ՚ի յունականն
 դնի ըստ նոյ հնչման՝ ε'πιστοιον էբի-
 ուզիօն՝ որ թարգմանի՝ գեր էա-
 կան, զոր ամանք թարգմանեն՝ վաղ

ու՛եան, քանզի ἐπιῶσα κλέρα էքի-
 ուզա իմէ՛աւ, ասի հետապայ կի՛
 վաղո՛ւեան օր, ու՛յ թէ այս իցէ
 իմասա բնաբանիս, ու՛յ յուրբա-
 թու կի՛՛ի վեցերի՛ աւուր պարա-
 պոյ հրէայք յանապատի անդ զմա-
 նանայն ժողովէին վս շաբաթու
 կի՛ կօթներորդ աւուրն՝ յորում
 պարտ էր հանգչել. ըստ նմին
 օրինակի տուր մեզ տ՛ր՝ զհաց
 այսօր վս վաղո՛ւեան աւուրն, զի
 մի՛ լիցի մեզ յայնմ բաղմասքօզ
 պատազիլ հողովք, այլ պարա-
 պեալ՝ պատրաստեցուք զանձինս
 մեր՝ ի կիւրակէ յարուէն և ՚ի
 յովբեւեան յւենից. քզի աստէն
 տառապիմք, և միայն զհացն
 ինդրեմք վս վաղո՛ւեան: Այսմ
 նպաստէ երոնիմոս՝ որ գրէ ՚ի
 մեկն՝. աւեա՛. յեբրայականն նա-
 զովբեցուց զնի՛ ղո մախառ, որ է
 վաղո՛ւեան. վս նքն աթանաս գե-
 ղեցկապէս ՚ի ճառն ժդեղուե բա-
 նին համարի՛ թէ աստէն հայ-

ցեմք զհոգին սբ՝ որ է հաց անձա-
 յին , որով ակնունիմք կերակրել
 և զմայլել յերկինս՝ զորոյ և զառ-
 հաւատչեայն ընկալեալ՝ բերկրիմք
 ՚ի խրհչոն հաղորդուե : Վարձեւ
 զբառ է բիւղիօն , մեկնէն՝ բե-
 ուիւղիօն , որ է գլխաւոր՝ եր-
 ևելի՝ գերազանց՝ մասնաւոր . սիւ-
 մաքոս թարգմանէ՝ ընտիր կ՝ որ
 գերազանցէ ք զամ՝ գոյացուիս ,
 և ՚ի վեր է ք զամ՝ արարածս .
 այսպէ՛զնէ և կիւրեղ ՚ի կաթե-
 խիզմն է . և ամբրօսիոս ՚ի գիրս
 է . խրհչոց . որ և զայս հաց հա-
 մարի լինել հաղորդուի սբ , զոր
 մարգարէն զաքարիսս կոչէ ՚ի գլ-
 թ . ՚ի վերջն . * ցորեան երիտա-
 սարդաց || . բայց ըստ ճիշդ նշա-
 նակուե և ըստ նկարագիր իմաց-
 ոււածոյ՝ է բիւղիօն՝ նոյն է լ բա-
 ուիս՝ ուղիասդիս , որ նշանակէ
 գոյացական՝ էական կի՛ գոյական ,
 որ ՚ի պահել զգոյացուի կ՝ զկեանս
 մարդոյ հանապազ է հարկաւոր .

այսպէս դնեն վիճակք յունաց՝ ոսկե-
 քերան բարսեղ և կիւրեղ, որ
 զբառդ է բիւրեղիօն թարգմանէ
 այսպէս՝ էբի՛ դին իմօն ուսիանքէ
 դուօքօն, քի է՛ գոյացուէ մերում
 և սննդեան յարմար և բաւական,
 այն՝ որ ոչ ծառայէ հեշտուէ,
 այլ՝ հարկաւորուէ, և մի՛ իցէ
 աւաւել հեշտացուցիչ և աւա-
 տագոյն, այլ՝ պարկեշտ և չա-
 փուստր, այս է՛ հանապազորդ.
 զի զայն՝ որ հանապազ է հար-
 կաւոր պահպանուէ կենաց, և
 որում զոր հանապազ կարօտիմք,
 կոչեմք՝ հանապազօրեայ. վնկ՛ ՚ի
 թարգմանսւէ ասորեոց դնի՛ հաց
 կարօտուէ մերոյ, և յարաբաց-
 ւոցն՝ հաց բաւական՝ զոր լատինք
 կոչեն՝ չիպարիում, որ թարգ-
 մանի՛ պաշար. սակա որոյ յատին
 թարգմանն ՚ի զուկասու Ժն. 3.
 բացայայտ դնէ՛ քուօդ-իախանում,
 որ է որ ըստ օրէն կի՛ հանապա-
 զորդ, որ է համաձայն մերումս

հայկական թարգմանութեամբ . թող
 զի 'ի մատթէոսի՝ ուր զնեն լա-
 տինք՝ գերգոյացական , հանապա-
 զորդ թարգմանեն և ընթեռնուն
 հարքն՝ որ յւջ եղեն թմկւ ք
 զթարգմանութի երոմիսիմոսի , ուն
 կիպրիանոս ամբրոսիոս օգոստի-
 նոս և այլք . մանաւ թէ բովանդակ
 եկեղեցի լատինացւոց 'ի պտրգի
 և յայլ ամ եկղեցին պաշտամունս
 յասելն զայս նորունական աղօթքս
 ը շարագրութեն մատթէոսի՝ ըստ
 յւջքան զերոմիսիմոս արարեալ հին
 թարգմանութեան աղօթի այսն
 զհաց մեր հանապազորդ առ
 մեզ այսօր , և զսոյն օրինակ ալօ-
 թեւոյ ուռուցանէ համօրէն իւրոց
 հաւատացեւոց . իսկ երոմիսիմոս՝ որ
 հրամանաւ դամասոս պապին զլա-
 տին թարգմանութի նորոց կտակա-
 րանաց ըստ յունական բնագրին
 ուղղեաց , փոխանակ բառիս՝ հա-
 նապազորդ , 'ի մատթէոսի եզ-
 գերգոյացական , կամեւոյ հաւա-

տարմուլք 'ի յայտ ածել զբնիկ
 զօրուի յունական ճայնին, քանզի
 էբիսուղիօն ասի՝ ույ թէ՛ էթի
 ուղիան, որ է ասել՝ գերքան զգո-
 յացուի կի՛ք 'ի վր գոյացուե, ք
 է՛ ըստ գոյացուե, կի՛ք գոյացուե
 պատշաճեալ, որ իցէ քաջայար-
 մար և կարևոր 'ի հաստատել և
 'ի պահպանել զգոյացուի մեր,
 և ոչ աւելորդ հեշտալի և բաղ-
 մախոյզ, այլ՝ գոյացական սոսկ և
 հասարակ. վնյ նիւսացին 'ի ճառն
 աղօթից ասէ, * տուր զհաց, ոչ
 զշուք պերճուեց, ոչ զգրգանս
 փափկուեց, ոչ զոսկեհունս պա-
 ճուճանս, ոչ զականց շողշողիւնս,
 ոչ զհեթանոսաց նախարարուիս,
 ոչ զհանդերձս մետաքսագործս,
 ոչ զնուագածուս հեշտալուրս,
 և ոչ՝ որով հողին յածային և 'ի
 գլխաւորագոյն փութոյ տարաբա-
 ծին մնայ՝ այլ՝ զհաց... Գոյն ինչ է՝
 զոր պարտիս բնուեդ. զի՛ է, զի
 լըդէմանձին քո հարկս յաճախես.

զի որովայնն է մշտնջենաւոր հար-
 կապահանջ . ասասջիր ցնա՝ որ
 հաց հանէ յերկրէ , ասասջիր ցնա՝
 որ զագուաւս կերակրէ , որ ամ
 մարմնոց տայ կերակուր , որ բա-
 նայ զձեռն , և քաղցրութիւնս
 զամ կենդանի , ՚ի քէն է ինձ
 կեանք , և ՚ի քէն ինձ նպաստ կե-
 նաց ընծայի . առեր դու զհացն ,
 այն է՝ զի արդար վաստակովք
 կերակուր շահեցայց . զի եթէ
 արդարութիւնն է ամ , ապա որ ՚ի նեն-
 գապատիր շահու ստացաւ կերա-
 կուր , այնպիսին չունի հաց յայ || :
 Գիտել պարտ է և զայս , զի
 յունական բաւդ՝ էբիոնզիոն կա-
 րէ ածանցիլ և ՚ի բայէս էբի-
 էնէ , իմ գալ , որով նշանակի այն
 հացն՝ զոր յառաւօտուն պահու
 ինդրեմք վնէկէլ հասեւաւուն .
 վնկ թարգմանիչք մեր՝ որ զսք
 գիրս ՚ի յունական բնագրէ հեղին
 ՚ի հայ բարբառ , ՚ի մատթէոսի
 բնագրանին եղին՝ հանապազորդ ,

խակ 'ի զուկասու՝ օր ըստ օրէն ,
 որք զնոյն նշանակէն . և բովան-
 դակ հայաստանեայց ազգս 'ի սոյն
 աղօթս առ հմրկ վարխմք ըստ հա-
 բազատ բնութանի աւետարանին
 մատթէոսի համաձայն լատինաց-
 ւոց՝ որք թէնյ 'ի սմին աւետա-
 րանի դնեն՝ գերգոյացական , բայց
 ույ աւայաք յառ հմրկ աղօթս
 վարին հանապազորդ բառիւ , և
 բզմք 'ի սբց հարց նց սովին բա-
 ռիւ բացատրեն զայս տեղի :

Վ և այլ ինչ նկատելի աստէն , զի
 ոմանք 'ի հերետիովտաց 'ի սոյն
 աղօթս հաց միայն զմարմնաւորն
 իմանան , և կէսք յուղղափառաց՝
 միայն զհոգեւորն և զիմանալին .
 այսոյ դնեն երոնխմոս կիւրեղ
 լամբրոնագի ամբրոսիոս և այլք .
 * հաց զի՞նչ է (ասէ լամբրոնա-
 ցի) , բայց եթէ գիտուի և սէր
 նորին՝ որով փափաք հոգւոյս կե-
 րակրի . այն սեղանն՝ ուր սորն
 զիւր աշակերտան հրաւիրեաց .

ու ախիջիք՝ ասէ՛ ՚ի սեղանն իմ յար-
 քայուն իմում՝ ॥ Բայց ասելի է՛
 թէ՛ աստանօր հաց ասելով՝ ըստ
 ճառին իմացել լինի թէ՛ նիւթա-
 կանն մարմնոյն կազդուրիչ և կար-
 ևոր, և թէ՛ իմանալին և երկնա-
 յինն, ուղի են բան ւնյ և սբ հա-
 հազորդունն. զի երկոցունցս կա-
 բօտիմք, վս այն և զերկոսին իսկ
 հայցեմք, և երկրորդն այնչափ է
 առաւել ք զառաջինն, որչափ հո-
 գին գերազանց է քան զմարմին. և
 զայս նշանակէ բառս գերօգոյացա-
 կան՝ զոր յաւէտ կամեցան դնել
 լատինք ՚ի թարգմանուն իւրեանց
 յաւեստարանին մատթէոսի յայս
 միտ՝ զոր արդ մեկնեցաք. սակս
 այսորիկ ՚ի յունականն յաւելելի-
 նի մաւնդ թէ՛ կրկնի մասնիկս՝
 դօն, այսո՞ւ՞ դօն աւդօն, դօն
 էբիօւզիօն, յի՞ զհացն՝ զօգոյացա-
 կանն, ուն թէ՛ ասէր, առեր մեզ
 զհացն, ո՛չ՝ որ հասարակ իցէ,
 այլ՝ զայն՝ որ մասնաւոր է և գե-

րազանց երկնային և իմծազանս .
 զի այս թու՛ի ակնարկել 'ի մա-
 նանայն տու՛ել հրէից յանապատի
 անդ՝ որ օրինակն էր խրճդյ ամե-
 նասբ հաղորդուէ . քզի զմանա-
 նայէն ասի 'ի սաղ՝ . հէ. 24. * զհաց
 հրէշտակաց ետնց , զհաց հրէշ-
 տակաց կերան մգիկ || . ապա ույ
 մանանայ էր կերակուր գերա-
 զանց երկնային և հրէշտակային ,
 նոյնօրինակ և առաւել ևս է հրա-
 շախառ հաղորդուին . վնյ յի-
 մաստ՝ . ժթ. 20. 'ի հայերէնն դնի
 անուշակ , 'ի բնագիրն յունաց եղել
 է՝ ամպրօզիա՝ որ 'ի բանաստեղ-
 ծից ասի լինել կերակուր չիմծց :
 Ատեն զբառս հաց թէ՛ հոգևոր
 և թէ՛ մարմնաւոր իմանան ոսկե-
 բերան օգոսաինոս կիպրիանոս և
 ամբրոսիոս՝ որ 'ի գիրս է . խրճդց .
 զէ ր . ասէ , * եթէ հացս է հա-
 նապագորդ , ապա զի՞ է , զի յետ
 ամին ևեթ առնուս զայս , այն-
 պէս կեանս վարեսջիր , զի արժա-

նի լեցիս հանապազ առնուլ. զոր
 օրինակ նախնի հաւատացեալք
 հանապազօր հաղորդէին, որպէս
 յայտ է 'ի գործ". Է. 46. || . և
 կիպրիանոս ասէ՝ * հանապազօր
 հայցեմք տալ մեզ զհացս զայս,
 զե մի որ եմքս 'ի քս, և զխոր-
 հուրդն հաղորդուե հանապազ
 առնումք 'ի կերակուր փրկական
 անջրպետ ընդ մէջ արկեալ երէք
 յանցաւորուե, հրաժարեալ և
 անհաղորդ մնալով մեր՝ յերկնա-
 յին հացէս ժառանգազուրկ վեր-
 ջասցուք, 'ի մարմնոյն քսի 'ի բա-
 ցեայ ճգեսցուք, այն՝ որ ասացն
 և խրատուսեաց, ես եմ հացն
 կենդանի՝ որ յերկնից իջեալ. եթէ
 ոք ուտիցէ 'ի հացէ յայսմանէ,
 կեցցէ 'ի յաւիտեան. 'ե յուհ".
 Գ. 51. և 52. || : Յասացելոց աստի
 ցայս վայր քաջայայտ երևի՝ թէ
 աստանօր հացիւ ըստ նկարագրին
 խմացեալ լինի հացն մարմնաւոր
 և հացն հոգևոր, այն է՝ սբ հաւ

զորդուին . և ըստ բարոյականին՝
 գիտուի և սէր ինչ և այլ պէսպէս
 իմծաճաճոյ առաքինուէք , ուն աւ
 սացաք ՚ի վերոյ . և ըստ վերա-
 ծականին՝ գէւյանդիման երանա-
 կան տեսութի ինչ յերկինս՝ յոր
 հանապազ ազաչեմք զիմծ վերածել
 զմեզ : Այց ծանիր , զի ըստ եբ-
 րայական ոճոյ խելամտուէ ճևով
 ք հացին պարունակին աստէն և
 զի՞նչ և իցէ պիտոյք պարենի՝
 զգեստու՝ բնակուէ , և որք միան
 դամ հոգւոյն և մարմնոյն են կար-
 ևոր . զի զայս իմ աստէն խընդ-
 րեմք , զորս եթէ ունիցիմք՝
 զպահպանուի նոյն մաղթեմք .
 * զբաւականն հայցեմք՝ անուամբ
 հացին զբովանդակն նշնկելով ॥ :
 ասէ սբն օգոստինոս ՚ի թուղ՝ իմ :
 2 . Ասի՝ տո՛ւր մեզ , տո՛ւր ասե-
 լով՝ ոչ միայն հայցեմք տալ զհացն ,
 այլև մաղթելով աղերսեմք զիմծ
 սերտի՛ իմն տպաւորել և տարրա-
 ցուցանել ՚ի հացն յայն զզօրուի

սնուցանելոյ և զոյժ հաստատու
 լոյ, ունի զի մարմնաւոր հացն լի
 ցի յօգուտ աւուղջուէ և զօրուէ,
 որով մարմինն լաւ ևս հնազանդ
 լիցի հոգւոյ, և նպաստեացէ նմա
 ՚ի պաշտօն և ՚ի ծառայութի նոյ.
 այսն զնէ սկեբերան. և օգու
 տինոս ուսուցանէ ՚ի բանն ճլէ,
 թէ զայս հաց յայն սակս հայ
 ցեմք յոյ, զի փափաքեսցուք աւ
 նուլ ՚ի ձեռաց նր զկերակուրն
 զաւ ՚ի նմանէ սրբեալն զանօրի
 նեալն և զչափաւորն, ունի զի
 մարմնաւորս լիցի յօգուտ մարմնոյ,
 և մի ՚ի վասս հոգւոյ, իսկ ՚ի
 հոգւորս սնունդ մատուցէ մը
 տաց, և մի լուցկիս չարեաց ՚ի
 չարիս զաւաժանելոյ նիւթեացէ
 մարմնոյն: Յուսկ ամենայնի ասի
 այսօր, քզի յիմ ժամ մանաւանդ
 թէ յիմ վայրկենի իմ ուստեք
 անօգնական լեալ՝ կարօտիմք իմ
 յին ձեռնտուէ հաստատուէ և
 պարզեալաւ շիուէ. և այս յաւէա

'ի գերբնականս՝ ուն՝ նուստուից
 շնորհաց, ըստ բարոյական իմա-
 ցունածոյ բնաբանիս :

24. Արդ՝ քանզի կենցաղական եմք,
 յոլով անգամ պատահէ մեզ՝ 'ի
 սոյն յայս գերբնական կարգի 'ի
 շաւղացն ուղղուէ զարտուղի ելա-
 նել և զընդդէմն գործել, և առ
 զերծանելոյ 'ի խոտորմանէ այտի
 պէտս ունիմք մտղթել 'ի բա-
 րութեանէն նոյ անդրէն ուղղել
 զոտս գլթելոցս 'ի պողոտայն լու-
 սաշաւիղ՝ որ հանէ յերկինս . և
 այս ըստ երբեակ տարբերուե-
 թամանակի, ըստ անցելոյ՝ ըստ
 առաջիկայի և ըստ ապագայի .
 զի որ վերագոյնդ մտղթեցաքս 'ի
 մենէ զերանուե բարիս, աստանօր
 հայցեմք 'ի նմանէ բառնալ 'ի
 բաց զայնր երանուե խափանա-
 րարս՝ որ միայն են մեղք՝ զորս
 կամ գործեցաք . վնյ խնդրեմք
 թողուի ասելով՝ թող մեզ զպար-
 տիս մեր. կամ 'ի մօտոյ կարեմք

գործել . որոյ սակս խնդրեմք
 նպաստս ասելով՝ մի՛ տանիր զմեզ
 'ի փորձուի . և կամ՝ յապայն
 ունիմք գործել . յաղագս այնու
 ըիկ աղաչեմք ասելով՝ փրկեա՛ զմեզ
 'ի չարէ . զայսոսիկ մի ըստ միջէ
 տեսցուք . ապա յառաջնոյն ըս-
 կիզեն առնելով՝ ասէ բնաբանս :
 Աւ թող մեզ զպարտիս մեր , որ-
 պէս և թողումք մերոց . պարտա-
 պանաց : Արաբացի թարգմանու-
 թիւնն դնէ այսպէ , և թող մեզ
 զմեզս մեր , ուն և մեք թողումք
 նոյն՝ որք մեզան մեզ . բայց այս
 նոյն է ընդ մերումս , ուն ասաս-
 ցուք յառաջիկայդ : Այլ արդ իսկ
 ծանուցաք , 'ի յառաջնթաց չո-
 բեսին հայցունածս 'ի անէ մազ
 թեցաք զբարիս , այսուհետև յե-
 ըիս հետագայս աղերսեմք զնա
 մերժել 'ի մէնջ զչարիս , զան-
 ճանցս տկարուի խոնարհամտութե
 առաջի նոյն մերկանալով . վն այս
 է հինգերորդ հայցունած : Արդ՝

սատանօր բառինս պարտիք կամ
 պարտք՝ որ զնոյն նշանակէ, խմա-
 ցեալ լինի մեղք. քանզի ՚ի յունա-
 կան բնագրի ՚ի զուկասու ժամ. 4.
 դնի յայանսն՝ ամառդիսա՝ որ
 թարգմանի մեղք, ունի դնի ՚ի
 մերումն անտանօր ՚ի զուկ՝. վնզի
 մեղքն է ծայրագոյն պարտք սակս
 ծայրագոյն անիրաւունէն՝ զոր բե-
 րէ յամ՝ որ է ծայրագոյն ուղղուն
 և անսահման բարունի. յայս սակս
 զպարտիս մեղաց ոչ ուրուք ձեռն
 բաւական է ՚ի վճարել, ոչ մար-
 դոյ և ոչ հրեշտակի, այլ՝ միայն
 քնի՝ որ է ամբ և մարդ. ապա
 այս պարտիք են մեղք՝ որք ՚ի
 ներքս ածեն զմեղապարտութիւն
 պատժոց և դեհենի՝ որում պար-
 տաւոր գործեն զմարդն զոյգ լը
 մեղանչել նր. յորմէ յայտ է՝ թէ
 առ ՚ի մահ մեղուցեալն զհոգին
 պարտի սատանայի՝ յաւիտենական
 մահու՝ և անեզրական դժոխոց.
 իսկ այս պարտի զհազար, նա մա-

նաւանդ՝ զանասման հոգիս՝ մա-
 հունս՝ և գեհեանս, եթէ հնար
 ինչ էր նմ ունիլ զայնս, կի՛մ կա-
 րող էր տանիլ այնց. և ահա զայս
 անլճարելի պարտեաց թողուի
 հայցեմք յոյ բանիւն, որ միայն
 ՚ի խոնարհիլ մերում զղջուք սրտի՝
 ներողամտուք գիտէ թողուլ մեզ
 պարտաւորացս ՚ի ձեռն չարչա-
 րանաց ան մերոյ յսի քսի, այլ
 ոչ արդարուէն օրինօք զհատու-
 ցումն ամբաւելի պարտեացս ճըշ-
 դիւն ՚ի մէնջ պահանջելով: Այսպիսի
 դնէ լամբրոնացի՝ որ ՚ի սկզբան
 անդ մեկնուէ այսր բնաբանիս
 գեղեցիկս բարբառի այսպի. * տի-
 րամ ինդրեաց յոյ զամ ինչ նա-
 խակարդեալ համաւօտ բանիւդ,
 այսուհետև յաւաջ գայ զանձին
 կրից խոստովանուի սիււել նք
 աւաջի. բայց դու ան ինձ զա-
 մենաբարի ընդարձակուի կամաց
 աղօթիցս ուսուցանողի. զի ոչ
 նախ զմեզն թողուլ ուսոյց խընդ-

րել , և ապա ընդ իմժ խօսել , ում
 մարդկան սովորուի է . քզի նախ
 ներու մն խնդրեմք 'ի թագաւորէ ,
 և ապա զհայցուածս ընդ նմա
 բարբառեմք . իսկ սա ոչ այս
 պէս , այլ՝ զհնուկն սորին , նախ
 զպարզեան խնդրեաց , և ապա
 զներու մն ուսուցանելով բաւակա
 նասմ . քզի թէնմ և 'ի խորս չա
 րեաց հատանեմք՝ երկրորդ էն
 յանցանք մեր խաղաղուէն և
 գթուէն՝ զոր ունի իմժ 'ի վր մարդ
 կային բնուես . վսյ զկարեորն և
 զմեծն ունել ազօթեաց . և ապա
 յետ զայն ունելոյ դիւրաւ գըա
 ցուք 'ի բարերար կամացն մարդ
 կամ գթելոյն զներու մն : թնդ
 մեզ ասէ՝ զպարտիս մեր . ար
 դարե պարտապանք , զի յայսքան
 շնորհս նր վայելեալ մարմնով և
 հոգւով՝ զիմրդ ոչ գտանիմք պար
 տապան հրամանի մն կալ հոյա
 տակս . ուստի և 'ի յանցանելն
 զնովաւ՝ վայելչամ և ուղիղ խոս

տովանուլք պարտական զանձինս
 դատել զներումն խնդրելք ասե-
 լով թոյլ արա պարտուցն՝ զոր
 ընդ սխալելն մեր ամենատես զի-
 տուլքդ համբարեալ ամփոփեսս և
 թողուս . էր վն , զի մարմնաւոր
 եմք , զի դիւրապատիր կամօքս
 խաբիմք , զի 'ի խաւար կենցա-
 ղոյս շրջիմք , զի օրէնս ունիմք
 բնականս հակառակ օրինացս
 մտաց և գերօղ զիս ահամայ 'ի
 յօրէնս մեղացն ॥ : Աստանօր ար-
 ժան է գետել 'ի հարեանցի . զի
 սք հարք 'ի բնաբանէ աստի քաջ
 ցուցանեն՝ թէ չիք ոք չիք ուրեք
 'ի հողածնելոցս անմեղ և զերծ
 գէթ 'ի ներելի յանցանաց . վնյ
 ուղղուլք կարող է մի որ աղօթել
 առ մծ բանիւն՝ թող մեզ զպար-
 տիս մեր . այլ պեղազեան անուա-
 նեալ հերեսիովտք այսմ՝ վն պուէ
 դիմադարձ լեալ՝ ասէին՝ թէ ար-
 դարքն կարեն յաղօթս ասել թող
 մեզ զպարտիս՝ ոչ վն անձանց ,

այլ վն այլոց , զոր օրինակ՝ ընկե-
 րաց՝ որք մեղան . ապա թէ վն
 անձանց ասացին , զայն կարող
 են ասել ոչ ճշմարտութե , այլ խո-
 նարհութե և պարկեշտութե . Բայց
 զայսպիսի մոլորածայն աղանդս
 բազմօք ցրէ սքն օգոսաինոո 'ի ք .
 գիրս մեղաց և արժանեաց . 'ի
 զէ Ժ . և 'ի գիրս ըդէմ՝ թղթոյն
 պարմէնիանեայ 'ի զէ Ժ . վն զի
 ոչ ասեմք՝ թող այլոց զպարախ
 այլոց , այլ՝ թող մեզ զպարախ
 մեր , և քսու լիցի մեզ առաջի նոյ
 ստել՝ որ ոչ եթէ խոնարհութի ,
 այլ՝ կեղծաւորութի և նենգութի է .
 սորին վն ասէ սքն կիպրիանաս
 * մի ոք յաչս անձին թուեացի
 իբր անմեղ լինել , և յանչափն
 ամբառնալով զանձն՝ 'ի կորուստ
 դնացէ , այլ խելամուտ լեալ
 ծանիցէ՝ թէ մեղանչէ հանա-
 սրազ . յոյր սակս հրամայի վն
 մեղացն յաղօթս կալ հանապա-
 զորդ ॥ : Յաղագս այսորիկ և

Ժողովն միլեմիտաննեան լ'ի կան",
 ւն. նզովէ զնս՝ որք ասեն, թէ
 սբք դեռ 'ի մարմնի կացեալք՝
 դբանս՝ թող մեզ զպարտիս մեր,
 կարեն ասել խոնարհութիւնք,
 այլ ոչ՝ ճշմարտութիւնք. * ս ոք (ասէ)
 հանդուրժեսցէ այնմ՝ որ մինչ
 դեռ յաղօթս կայ, ոչ մարդկան,
 այլ՝ նոյն խակ տն ստէ, որ շքք
 թամբք ասէ՝ կամիմ՝ զի թողցին
 ինձ, սրտի՛ւ ասէ՝ չունիմ զպար-
 տիս՝ որք թողցին ինձ || : Սոյն
 ասէ և Ժողովն ամբիկաննեան սո-
 վին բանիւք 'ի զԷ. հԳ : Բայց սա-
 կայն զայն ևս սրտա կ զխտել,
 զի անձամայր կոյսն մինչդեռ էր
 յաստի կեանս, կարէր աղօթել
 բանի՛ւս՝ թող մեզ զպարտիս մեր,
 ոչ 'իդէմս իւր, այլ՝ 'ի դէմս
 այլոց. վսզի ամենօրհնեալ կոյսն
 ոչ երբէք մեղաւ, և ոչ խակ փոքր
 ինչ ներելի յանցանօք. վս այն
 առ հասարակ եկեղեցի հաստա-
 տութիւն ընդունի՝ թէ սբ կոյսն

աւանձին շնորհօք զիմ՝ աւուրս
 կենաց իւրոց զերծ գտաւ յիմ
 մեղաց ևս և ՚ի ներելի յանցունա-
 ծոց . ուր ասի ՚ի ժողովն արիդեն-
 տեան ՚ի գումարն ք . ՚ի կանոնն
 իք . ուր և նշովին նորա՝ որք ասեն
 թէ միջն (բաց ՚ի կուսէն) կարող
 է ՚ի բովանդակ կեանս իւր զերծ
 լինել յիմ մեղաց ևս և ՚ի ներելի
 յանցանաց : Ապա ուրեմն եթէ
 ամ՝ մարդ թէ և արդարն յաստի
 կենցաղս չկարէ լինել աւանց ամ
 մեղաց , իւրաքանչիւրօք կարէ
 ուղղութեամբ ասել յաղօթս՝ թող մեզ
 զպարտիս մեր , ոչ ՚ի դէմս այլոյ ,
 այլ ՚ի դէմս իւր տիրանոյ , զի
 այսմ հակադրեալ կարծիքն է
 նշովեալ և մոլորական , իսկ այն
 ՚ի դէմս իւր աղօթելն արդարոյ
 ոչ ճշմարտի յիմ ծածինն , զի սա
 յաստիս ամենեւին էր անմեղ , այլ
 ոչ՝ այլ ամ՝ մարդիկ , վնջ կարէր
 աղօթել ոչ ՚ի դէմս իւր , այլ ՚ի
 դէմս այլոյ , ապա թէ ոչ և

այսմ՝ հակադրեալ կարծիքն հնու
 է՝ ի նպոխ և մուրական . զի
 հակառակ զիննի կարծեաց եկե-
 ղեցւոյ : Ասացաք՝ կարէր . որով
 ոչ պնդեմք՝ թէ իրօք այնպէս աղօ-
 թեաց . զի ծայրագոյն խոնարհուի
 նք՝ ոչ ներէր այսմ . այլ խոնարհ
 պարզութիւնս զհասարակ աղօթս
 որդւոյ իւրոյ վարէր հասարակ
 օրինակաւ . այլ յանարատուէ
 անախ նք հաւաստիս առեալ՝
 զայնպէս կարելն նք և եթ խնաս-
 տասիրեցաք . որ ի նմա միայն ,
 և ոչ յայլ ունի ճշմարտիլ : Արդ՝
 հայեցո՞ւք ի միւս մասն բնաբա-
 նիս . ուր և մեք թողումք մերոց
 պարտապանաց . ուր թէ ասէր ,
 թողումք զպարտս ոչ դրամոյ ,
 և ոչ զպարտաւորուի անդրէն
 հատուցանելոյ կի՞ նորոգելոյ զա-
 զարտեալ համբաւն և զպատիւն ,
 այլ զպարտս անիրաւունէն յինկե-
 լէն առ մեզ եղելոյ՝ այնպէս զի
 այնուհետեւ այլ ոչ ևս ասելուք

բերիմք լինկերն վն այնր անի-
 բաւութե, և ոչ կամիմք վրէժ-
 խնդիր լինել 'ի նմանէ, ոչ առան-
 ձին պահանջողութե և ոչ դատո-
 ղական իշխանութե. բայց եթէ
 յորժամ բարին հասարակաց և
 և ուղիղ բանն զնոյն պահանջեսցէ
 և թելադրեսցէ: Բայց ծանիր,
 զի աստէն բաւս՝ ուն, ոչ նշանակէ
 զկանոն կի՞ զչամի՞ զոր պարտ իցէ
 անոյ 'ի ձեռս առնուլ 'ի թողուլն
 զմեզս. զի բազում ինչ հայցեմք
 յանոյ թողուլ մեզ՝ զորս այլք կի՞
 լնկերք մեր ոչ պարտին մեզ. այլ՝
 յայտ առնէ զպատճառն՝ որ շար-
 ժէ զանձ 'ի թողուլ. վն բայա-
 յայտ ևս գնէ զուկաս 'ի ժն. 4.
 * թող մեզ զմեզս մեր. զի և
 մեք թողումք անմի՞ որ պարտիցի
 մեզ ||. զի այս է պայման ինչ կի՞
 թէ ունի՞ զոր անձ 'ի մէնջ պա-
 հանջէ, զոր ընդ կատարելն մեր՝
 և նա դիւրաւ թողու մեզ. ապա
 թէ ոչ՝ ոչ թողու. ըստ այնմ՝

* զի եթէ դուք թողուցուք մարդկան զյանցանս նոցա, թողցէ և ձեզ հայրն ձեր երկնաւոր ॥ մատ. Գ. 14. ապա այս է իբր դաշն զոր կուէ Թժ ընդ մեզաւորաց. եթէ թողուք, թողում. ապա թէ դուք ոչ թողուք, ոչ թողում և ես: Ասացաք յայտ առնէ զպատճառն, բայց ոչ այնպէս, ուր թէ այս իցէ իմաստ բանին. նախ՝ դու թող մեզ, ապա և մեք թողումք. զի այս յաւէտ հայհոյուի է՝ ք թէ աղօթք. այլ իմացունած բանին է, դու թող մեզ. ք զի մեք ընկերաց մերոց ՚ի մեզ անիրաւելոց սրտի մտօք թողելէ մեք կմ գէթ ահա այժմ թողումք ճշմարիտ սրտիւ, որով զհրամանս քո կատարեմք. վնջ հայցեմք, զի և դու թողցես մեզ. ք զի զոր հրամայեցեր, արարաք. արդ հատո՞ զոր խոստացար: Այս է ասելն՝ ուր և մեք թողումք մերոց պարտապանաց, վնջ

Լամբրոնացի խօսելով ընդ նոյ՝
 ասէ, * ներելն քեզ վայելչականն,
 ուն բարերար՝ տկարի, ուն ողոր-
 մած՝ ողորմելոյ, ուն գթած՝ կա-
 րօաի, ուն և ես ներեմ իմունն
 պարտաւորի || . և կիպրիանոս
 ասէ * եզ (նծ) օրէնս՝ օրք որո-
 շակի պայմանադրութեւ խոսա-
 մամբ պարտաւորեն զմեզ . զի
 այնն հայցեսցուք զմեզս մեր թո-
 դուլ, ըստ որոյ և մեք թողումք
 մերոց պարտապանաց . նրալիս
 յանցանք է այն՝ (չկամելն թո-
 դուլ) որ արեամբ վկայուէ ան-
 դամ ոչ տայ տեղի || . ք զի ուն
 ընթեանուիք զսակրիկոս անուն
 քհնյէ ումեմնէ՝ որ վրէպ գաւա-
 ՚ի վկայական պատկէ վն այսպիսի
 յանցանաց . իբր զի նր հաստա-
 տուն կացեալ ՚ի քն՝ հրամանաւ
 հեթանոս գատաւորին գատաւը-
 ճիւղ գլխապարտուէ հատաւ ըզ-
 նմանէ . բայց իբրև ածաւ ՚ի տե-
 ղի կատարման՝ ուր այն ինչ կա-

մէին զահիճքն առնուլ զգլուխ
 նր՝, նա երկուցել ՚ի սպառնալ
 լեաց մահու՝ անդէն անկաւ ՚ի
 հաւտոոց, և գաաւ թախուր ՚ի
 սրակէ վկայից՝ զոր ՚ի մօտոյ ու
 նէր ՚ի ձեռին. և այս եղև նմա
 ՚ի պատիժ դժնդակ բարոյից նր՝.
 Ինխանակ զի չէաւ յանձն ներել
 սխալանաց՝ որով արամեցուցեալն
 էր զնա Յիկ ոմն նիկեփոս անուն
 որ ՚ի տեղւոջն յայնմիկ արտա
 տէախաան աղաչանօք չկարաց
 զասպրիկոս համոզել ՚ի հաշտու
 թիւն, և տեսեալ՝ թէ նա ու
 բանայ զքս՝. երջանիկն նիկեփոս
 քաջութի՛ յառաջ շահատակեալ
 ինքնամատոյց ՚ի հանդէս առա
 քինուէն մեծի՛ ինքն էարբ զբա
 ժակ մահու ՚ի տեղի թշուառա
 կանին այնորիկ. և այնպէս իբրև
 թէ կորզեաց ՚ի ձեռաց նր՝ զբրա
 բիոն յաղթուէն. որով ըստ ասից
 սբյն երոնխմոսի՝ կեանք սբց են
 իբր մեկնուի սբ գրոց: **Յաղագս**

այսորիկ սբն յովհաննէս ողորմած
անուանեալ՝ պատրիարդ աղեք-
ոանդրիոյ կամեցեալ՝ի հաշտուի
ածել զիշխան ոմն ռիսակալ առ
Թշնամին իւր՝ զայսպիսի գեղե-
ցիկ հնարս հնարեցաւ. ք զի՛ի մա-
տուցանել անդ սբն առաջի նք
պատարագ՝ և յասելն՝ Թոյլ մեզ
զպարտիս մեր. անդէն առ վայր
մի լուեաց. ապա զհետ նք յա-
ւել իշխանն ասել՝ ույ և մեք
Թողումք մերոց պարասպանաց.
յայն բան վաղվաղակի զդէմս իւր
դարձուցեալ առ նա պատրիարդն՝
ի միտ առ ասէ՝ Թէ յիրպիսի
ահագին պահու զի՛նչ ասես ցար
մծ, ույ ես Թողում, նոյնպէս և
դու Թոյլ ինձ. ՚ի բանից աստի
իբրև ՚ի կայծականէ հարեալ իշ-
խանն՝ բարբառեցաւ և ասէ՝ մք
զոր ինչ միանգամ հրամայեցես,
արասցէ՛ ծառայ քո. և փոյթ ընդ
փոյթ հաշտեցաւ ընդ Թշնամւոյն:
Ա՛յն ոլք չկամին ներել անիրա-

ւու թէ ընկերին, սովին աղօթիւք
 ստեն աւաջի նոյ, և լուրեայն
 անձամբ զանձինս դատապարտեն,
 և զինքեանս թողուէ անարժան
 ցուցանեն, և ուր թէ ըզէ միւր-
 եանց վճիւ հատանեն: Սմանք հա-
 մարին՝ թէ այս ստուի իցէ ծանր
 մեղք, զի լինի նոյ, վնոյ ոմանց
 չկամեցեալ թողուլ ընկերին յա-
 սելն զտրունական աղօթս՝ հայր
 մեր, զայս հայցուած՝ ի բաց թու-
 դուն. այլ յայտ է՝ թէ չիք այս-
 պիտի երկիւղ ծանունս մեղանչե-
 լոյ. բայց եթէ գուցէ անտական
 արհամարհուի ներողամտուէն նոյ
 կի՛րական նորոգուի յսակալուէ
 առ ընկերն, ապա ուղղագոյն է
 ասել թէ ոչ մեղանչեն. քզի սո-
 վին աղօթեն՝ ի դէմս եկեղեցւոյ՝
 որ թողու զպարսիս պարտապանաց
 իւրոց, որով և ինքեանք իսկ շար-
 ժին ի թողուլ, և ըստ խիբ յնոյ
 հայցեն շնորհս՝ որով արասցեն
 զնոյն, և յասելն՝ ուր և մեք թու-

դու՛մք, ու՛յ թէ՛ ասե՛ն՝ ու՛յ բզ՛մք
 'ի մէ՛նջ թողու՛ն իւրեանց պար-
 տապանաց կ՛մ ու՛յ պարախ՛մք և
 ցանկամք թողու՛լ, այլ զի տկա-
 րուի մեր անզօր է աւնել զայս,
 դո՛ւ Խ՛ր՝ տո՛ւր զօրուի, և փոխեա՛
 զսիրտս մեր՝ որով կարասցուք աւ-
 նել՝ զոր պարան է մեզ գործել,
 թո՛ղ մեզ ասե՛մք ո՛յ, որով ցու-
 ցանե՛մք՝ թէ՛ փախաքելի է մեզ
 խողաղուին. իսկ թէ՛ չյօժարի-
 ցիմք ներել ընկերին, ո՛րպիսի դի-
 մօք յանդաման Խ՛ն կացել՝ ցան-
 կալի հաշտութե՛ն խնդրող զմեզ
 ցուցանել իշխե՛մք. թողու՛մք ա-
 սե՛մք՝ մերոց պարտապանաց. որո՞ց
 և ո՛րպիսի. հաւատար ընկերաց
 'ի նմին վանգու՛ածոց զօրութի՛ք
 նոյն արարչին եղելոց. և զի՛նչ
 դժնդակ քան զայս՝ կամիլ յարար-
 չէ՛ն աւնուլ թողութի և չկամիլ
 ներել փասուց ընկերին. բանի՛ւ
 ասել թողու՛մք, և զսիրտն օւնել
 ռիակալ. և զի՛նչ ապաւու՛մ քան

զայս լինել անձնավիաս աղաչա-
 ւոր . ապա 'ի միտ առցուք զօ-
 գուտ անձանց , զի 'ի սրտէ թո-
 զուլ բնկերին՝ ամժային ներողամ-
 աութեն տայ մեզ հանգիպել .
 թող զմարմնոյ զխրութի անտի ,
 հանգիտ սրտի՝ խաղաղութի կե-
 նաց՝ անդորրութի ընտանեաց՝ և
 համօրէն ուրախուի և երանու-
 թե առիթ աստ և անդ . յորմէ
 'ի միտ առնումք 'ի հակառակ սա-
 կի՝ ըստ գեղեցիկ ասացունածոյ
 լամբրոնացւոյն 'ի մեկնուե այսր
 բնաբանի , զի մեզք յխակալութե
 աւելի իմն և տարօրինակ չարու-
 թի պարուրէ յինքեան . վնդի են
 այլ տեսակք մեղաց՝ որ յանցա-
 նելովն՝ մարմնոյս հեշտութի մա-
 տուցանեն . ուն որկրամոլութի ծու-
 լութի և այլ ևս . բայց այս ախտ
 թշնամութե ոչ բնաւ . զի 'ի ախ-
 բեւն 'ի վն մեր՝ 'ի հոգս և 'ի
 ծուխ արկանէ , յերկիւղ և 'ի
 տարակուսանս , և ընդէր ոչ զի .

ջանելովն հանգուցանեմք զուն-
 ձինս, և շահիմք զեղբարսն. ք-
 զի յամբարտաւանութն ըմբռնիմք,
 ոչ զի ջանելով աւ յանցաւորսն սի-
 րով. իսկ ամբարտաւանութն հիւ-
 զնի նոյ, և ոչ եթէ ՚ի նւանէ
 զներումն ինդրէ. յայսմ ախտէ
 տիրեաց ամ անկարգութի յճս. սա
 արար զանձաւս բնակուի, զքա-
 ղաքս ամբուլթի, զզէնս ՚ի սպա-
 նութի. վսկ ասէ ամ ամ ումեք՝
 որ սովին ախտիւ է պաշարեալ.
 դու թող. քանզի ես ոչ կարեմ
 թողուլ զթշնամութիդ՝ զոր դու
 տնձնիշխան կամօք ըմբռնեալ պա-
 հես. արդ՝ յոյժ զկնճիուն ամբար-
 տաւանութե՝ որ հակառակի ի-
 մումս ամենաբարի բնուե. արձա-
 կեա՛ զկապս խառվայոյզ թշնա-
 մութե՝ որ ընդ դէմ է ՚ի բարին
 հաստեալ բնուեդ. և թող ընկե-
 ըին զպարտսն. արա՛ դու զքո կա-
 ընն, զոր օրինակ և յոյ պահան-
 ջես աւնել զիւրն կարելի. թող

դու զեղբօրն , և թողցէ քեզ
 հայրն քո երկնաւոր . կամացդ է
 աշխատուիլ 'ի թողուլն , և ոչ
 եթէ մարմնոյդ . իսկ եթէ զայս ոչ
 կամիս , զիա՞րդ զի՞մ յայն ինչ բռն
 նադատես՝ զոր դու ոչ եթէ տկա
 րանաս , այլ ոչ կամիս կատարել .
 արդ՝ ծանխցո՞ւք զերկօսեանս 'ի
 մեր օգուան լինել . մեր թողուլն
 խաղաղուէ լինի մեզ պատճառ և
 տնօրէն , և այն՝ զոր վն թողլոյն
 թողու , անվախճան կենաց կա
 րապետ . եթէ 'ի սոցանէ վրի
 պի՞ք սակս անտի ռիսակալուէն
 անձամբ զանձինս դժբե՞ք :

25. Արդ՝ յեա մաղթելոյ մեր յսոյ
 թողուլ մեզ զյանցանս մեր իբրև
 զանկշուելի սարսու , այսուհետև 'ի
 դէպ գայ մեզ հայցել 'ի նմանէ
 անտասան պահել զմեզ յիւրում
 բարեկամուէ , 'ի բաց հեռացու
 ցանելով 'ի մէնջ զի՞մ յանցաւո
 րուէց աւիթս՝ որ են բազմօրի
 նակ փորձութեցն տեսակք . վնկ

ասէ՛ և մի՛ տանիր զմեզ՝ ի փորձուի՛
 որ է վեցերորդ հայցուած . ասե-
 լովն՝ մի՛ տանիր , ոչ իմացել լինի
 ասել՝ մի՛ յորդորեր զմեզ անկա-
 նել ՚ի փորձուի կի՛ մի՛ գրակա-
 նապէս ձգեր զմեզ ՚ի փորձուի .
 զի այս իմացուած լի է հայհո-
 յուի , և է հերեւակոսական , այլ ի-
 մացել լինի ասել՝ մի՛ թոյլ տար , մի՛
 ՚ի բացեայ առներ ՚ի մէնջ զամա-
 յին նպատակ քո՛ յորոյ ընդ պա-
 կասիլն վաղվաղակի սահմէք ՚ի
 փորձուիս . վոյ ծանիր , զի քառա-
 կի ասի ձգել կի՛ տանիլ ՚ի փոր-
 ձուի . նախ՛ իբր արարչական պատ-
 ճառ . և ըստ այսմ՝ սիմոն մոզ-
 մարկիոնեանք և մանիքեցիք որդ-
 նալից բերանով ասէին զի՛ս՝ պատ-
 ճառ լինել ածելոյ մեր ՚ի փոր-
 ձուի քի է՛ ՚ի մեզս , ըստ որում
 մե՛ ետ մեզ զբնուիս՝ որ ոչ կարէ
 չմեղանչել՝ ասէին . բայց յայտ է
 ՚ի հաւատոց՝ թէ բաց ՚ի չար
 կամաց բանաւոր արարածոց չիք

այլ այդպիսի արարչական սրտա-
ճառ . և ամբ բնաւ ամենեւին չէ
այդպիսի փորձիչ . ըստ այնմ՝ զոր
ասէ յակովբոս աւարեայ . Խ. 13 .
* մի ոք՝ ոք՝ ՚ի փորձութեան իցէ ,
ասիցէ՝ թէ յոյ փորձիմ . զի ամ
անփորձ է չարեաց , փորձէ նա
և ոչ զոք ॥ Երկրորդ իբրև առիթ ,
ներքուստ և արաքուստ յորդո
րելով ՚ի մեզս կամ արկանելով ՚ի
փորձութիս . ըստ այնմ հերեփի-
կոսապետն կայմին և նորին չա-
րախաւուէն հեռեղք՝ ուսուցին՝
թէ ամ յաւաճադոյն յաւիտենից
սահմանեաց զամ մեզս՝ զորս մար-
դիկ ունէին զործել . և վս այն
՚ի ժամանակի գրգէ զմեզ ՚ի փոր-
ձութիս . այլ գձլ՝ քաջայայտ է ՚ի
հաւատոց՝ թէ ամ չէ այդպիսի
առիթ , այլ միայն Շ չար օրի-
նակօք՝ սատանայ չար խորհրդովք՝
և ցանկութիք չար յօժարութիք կոր-
ծանէն զմեզ ՚ի փորձութի . ըստ
այնմ՝ զոր յարէ զինի նոյն աւու .

քեալ . Խ . 14 . * Խւրաքանչիւրոք
 փորձի առ յիւրոց ցանկուեց ճը-
 գեալ և պատրեալ . Երրորդ՝ լժ
 ինքեան և ուղղակի , ույ եւթէ
 ոք գրգուեսցէ զոմն , և գրակա-
 նապէս զուգրնեթաց լիցի , և ի-
 րոք ստիպեսցէ զնա անկանիլ 'ի
 փորձուի , ըստ այսմ եւայ ասի
 լինել փորձիչ ադամայ , զի ապրու-
 տամբեցոյց զնա յօրինացն ույ , և
 պատրեաց զնա ուտել յարգելեալ
 պտղոյն . սակայն այս ևս 'ի հա-
 լատոց յայտ է , թէ ուծ ոչ զոք
 ստիպէ անկանիլ 'ի փորձուի . զի
 արդար է ուր , և զարդարուի
 սիրէ . և որ զայս յամենեցունց
 արգելու , ինքն զիարդ արասցէ
 զչարն և զանկարգն . և ահա մի
 'ի չարեաց է ձգել զոք 'ի փոր-
 ձուի . չորրորդ՝ ըստ պատահման
 և անուղղակի , յորժամ ոք կարէ
 և պարտի խափանել զպատահարն
 փորձուի՝ յոր ունի անկանիլ այլ
 ոմն , և ոչ խափանէ , զոր օրինակ

'նաւաւարն' որ անսխոյթ լինի ուղ-
 զել զգնացս նաւու, որով և ան-
 կանի 'ի վտանգ կորստեան, ասի
 անուղղակի աւիթ փորձուէ նա-
 ւու. զի կարէր և պարտ էր խա-
 փանել զայն փորձուի, և ոչ խա-
 փանեաց. նոյնպէս և այս ևս 'ի
 հաւատոց յայա է՝ թէ ամ ոչ է
 այսպիսի անուղղակի աւիթ փոր-
 ձուէ մերոյ. քզի ըստ օրինաց
 իմաստութե և ընդհանուր աես-
 չուէ իւրոյ ոչ պարտաւորի խա-
 փանել զփորձուինն՝ որոց թոյլ
 տայ լինել: Ապա ըստ մտաց ամ
 ուղղափառ հարց և վարդապե-
 տաց մնայ ասել՝ թէ ամ ասի տա-
 նիւ զմեզ 'ի փորձուի թոյլ տա-
 լով փորձուեց գալի 'ի բաց բառ-
 նալով զամային շնորհաց նպաստս՝
 յորմէ զհետ գայ մեզ գթել 'ի
 փորձուիս. վնյ ամ առնել ասի,
 յորժամ թոյլ տայ իմիք լինել.
 քզի ամի անհնար է լինել առանց
 ակնարկուէնն և առանց թոյլտը-

ունեւ ամենաօր ձեռինն նր. ա-
 ստ իմաստ բնաբանիս է, նախ
 ուղ թէ ասէր՝ մի թոյլ տար մեզ
 սայթաքել ՚ի փորձուի՝ որով պա-
 շարեւ նկուն լիցուք, ուղ ձկուէք
 թակարթին ՚ի ցանցս, և թըւ-
 ջուէք ըմբանին ՚ի ծողակս՝ որով
 պարուրեալ՝ կալեալ լինին, զի մի
 յօգնականուէ քումիւ լքեալ, և
 պատրեալ՝ կամ խնայ փորձուէ
 հաւան գացուք, և կամ տաղ-
 տապեալ՝ անկցուք ՚ի նոյն, ասէ
 նքն օգոստինոս ՚ի թուղթն Ճիւն.
 երկիւ՝ ուղ թէ ասէր, մի թոյլ տար
 փորձուէ պատահել մեզ. քզե
 թէ պէտ լնթեանումք ՚ի վարս
 հարանց, զի ոմանք ՚ի նքց հարց
 ցանկային ունել փորձուիս իբր
 նիւթս աւարինուէ և վարձուց
 ՚ի մեծէ արիուէ հողւոյ և յա-
 պաւինութէ յիւծ շարժեալ. սո-
 լին վն ասէ աւարեալն յակով-
 բոս ւն. 2. * ւն՝ ուրախուէ արժա-
 նի համարիչիք Էղբարք, յորժամ

'ի պէտպէս փորձուէց 'ի մէջ ան-
 կանիջիք ॥ վս զի փորձութիւն 'ի
 հանդէս աւաքինանամք , և քա-
 ջավարժ անտի ելանեմք , և 'ի
 մարտ հանդիսացեալ՝ յառաջա-
 դէմ զարգանամք , և կատարեալ
 գործիմք . բայց սակայն ապահո-
 վագոյն է 'ի փորձուէց խոյս տալ
 և յաղօթս ապաստանիլ . քանզի
 պարտիմք 'ի միտ առնուլ զչափ
 տկարութե մերոյ , և վս այն անձ-
 նապահ լինել 'ի փորձութեց , և
 ըստ կարի երկիւղածութիւն զանձինս
 'ի չափու ունիլ և յաղօթս կան-
 խել . վսկ պարտիմք քաջ 'ի միտ
 առնուլ , զի ապիկարն սատանայ
 ոչինչ խմիք ձեռնհաս է 'ի փոր-
 ձելն զմեզ , եթէ աս ոչ թոյլ
 տացէ նմա . ուր յայտ է 'ի յովբ
 'ի գլխս , զոր առ 'ի փորձել 'ի
 անէ երկոյս հրաման ինդրեաց
 չարն . և զի անհնար է մեզ ան-
 ձին զօրութիւն յաղթահարել զփոր-
 ձութիւնս , բայց եթէ օգնականութիւն

Հնորհացն ասյ . վսյ պարտ է աս
 ումեք 'ի փորձուեն պահու ան
 ճանձրոյթ և ջերմագոյնս հայ
 ցել զամենաբուռական նպաստս
 վարդասիրին յսի . ապա թէ ոչ
 մտալուտ վտանգ կայ մեր առա
 ջի՝ յամենաչարին մեքենայս ըմ
 բունելոյ . յայտօսիկ հայեցեալ սբն
 պետրոս ոսկիաբան ասէ 'ի բանն
 խի . * 'ի փորձութի երթայ՝ որ
 յաղօթս ոչ փութայ || . և սբն
 գրիգոր նիւսացի 'ի բանն աս . ասէ
 * եթէ աղօթք յառաջ ք զգործս
 վաղվաղեն , մեղք մուտս 'ի հո
 գին ոչ գտանեն || . բայց ըստ լամբ
 թոնացւոյն 'ի դէպ է նշմարել
 աստանօր . զի փորձուի աստ զներ
 գործութի չարին իմանամք , որ
 հանապազ ընդ մեզ մարտնչի .
 այլ ընդէ՞ր ոչ ասաց մարտ է պա
 տերազմ , այլ՝ փորձութի . զի յայտ
 արացէ՝ թէ ոչ ունի իշխանութի
 անձամբ անձին ը մեզ մարտնչիլ ,
 ուն ասացաք 'ի վերոյ . այլ զի՞նչ ,

'ի մերոց կամացս և 'ի խորհր-
 դոցս առնու զնիւթ պատերազ-
 մին . ըստ այնմ՝ հռովմ" . Գ. 6.
 * որում պատրաստէք զանձինս
 ձեր ծառայս 'ի հնազանդութի ,
 ծառայ էք՝ որում հնազանդիքն ,
 եթէ մեղաց՝ 'ի մահ , եթէ 'ի
 հնազանդութի արդարութեան՝ 'ի
 կեանս ॥ . ապա յայտ է՝ թէ 'ի մէնջ
 առնու զնիւթ փորձելոյն զայս
 օրինակ . քանզի փորձիչն առ մեզ
 մատուցեալ՝ 'ի ցանկութի կերակ-
 րոցն խորհրդակցի , և սերմանէ
 զօրկրամոլութի , 'ի ցանկութի փափն
 օյ կցորդի , և սերմանէ զանա-
 փառութի , և ըստ այնմ յամ կիրս .
 մեք զսկիզբն խորհրդոյն բարւոք
 գնեմք . իսկ նա ընդ նմին զչարն
 նիւթէ . և մինչչե է առեալ 'ի
 մէնջ զնիւթն , մեքենայք նք ան-
 գործ մնան , ուր յայտ է յաւե-
 տարանէն , զի յորժամ զկերպա-
 րանս քաղցոյն եցոյց արն , ապա
 մատուաւ առ նա փորձիչն . վս այն

ասի՝ փորձուի . քանզի զայդ ընդ
 ցուցանելն մեր զհարկաւորութի
 կարօտուես՝ դայնա . և ըստ այնմ
 մասին շարժեալ փորձէ զմեզ ,
 թէ արդեօք ե՞մք հասաստուն
 ՚ի սէրն ւնյ , թէ ոչ . և խառնէ
 ընդ բնաւորական կրիցն զաւե-
 լորդացն ցանկութի . զոր օրինակ
 վէ՛մ ինչ ունելով աւաջի՛ մեր ,
 ցորչափ հասաստուն է՝ անյոյս
 եմք ՚ի շարժելոյ դայն . իսկ թէ
 դրդուի՛ յայս կոյս յայն կոյս շար-
 ժեալ , նայիմք սեռանել և փոր-
 ձել , թէ կարե՞մք զշարժեալն
 կործանել : Արդ՝ շարժումն է
 մեզ ցանկուի կերակրոյ՝ ցանկուի
 հարկաւոր պիտոյից՝ ցանկուի վա-
 ռացն ւնյ . իսկ նա յորժամ սեռա-
 նէ զմին յայսցանէ շարժեալ , դայ
 փորձէ , և ընդ բարի խորհուրդն
 զիւրն խառնէ մեքենայս . թէ
 կարեմք ընտրուի առնել օտարին
 և բնականին՝ շնորհօքն ւնյ փր-
 կիմք . և փորձելովն՝ անփորձ

գտանիսք 'ի մարա թշնամեոյն .
 ապա թէ ոչ կարենք , և փոր-
 ձուէ խորհրդոյ իբր բարւոյ հա-
 ւանիսք , 'ի գործոյն կործանէ
 կատարումն , կերակրոցն ցան-
 կուք 'ի պունկուի , պիտոյիքն
 յործաթոխուի , ցանկուք վա-
 աացն ի՞նչ 'ի սնտիառուի . և մեք
 ըստ մերոց ցանկուեցն խաբեալ
 պատրիսք՝ ձգեալ զանձինս 'ի
 խորխորատ մեղացն : Ահա ոչս է
 ասելն՝ մի տանիք զմեզ 'ի փորձու-
 թի . ոչ իբր թէ ի՞նչ տանի . քան
 և մի լնցի . զի ի՞նչ անխորձ է
 չարեայ՝ ասաց սքանչելին յակուի-
 բոս, ո՞ր 'ի վերանդր 'ի մէջ մատու-
 ցաք . այլ թէ յոր մեք գնանք խար-
 դաւանութի գաւաճանողին հա-
 տարակաց բնուէս ընդ չարն իբրև
 ընդ բարի , մի թողուլ զմեզ ակա-
 մայ կամօք զանձինս 'ի նոյն կոր-
 ծանել աղաչեմք զբարեխնամն
 ի՞նչ՝ որ աւետանէ զկերպարանացն
 բնուի՞ որ չար է , և մեզ թուի

բարի, և ոչ է տիրաւիւ . զոր օրի-
 նակ եթէ ումեք դէպ լիցի երկն-
 չել յումանց՝ թէ ընդ բարւոք կե-
 րակուր խառնեալ զմահարար դեղ՝
 արբուցանեն նմա՝ ի սպանուի ,
 անդէն ասէ ցոք՝ ի բժշկաց , դու՝
 որ ճանաչես , միշտ ընդ իս լինի-
 ցիս . զի մի՛ վն՝ հարկաւոր պիտո-
 յիցն պատրեալ սպանիցիմ . այս-
 պէս և ՚ի նորունական աղօթքս
 պաղատիմք առ նձ ասելով , ՚ի
 հարկաւորսն՝ զոր կարօտուի մար-
 մնոյս պահանջէ , դու ամենահա-
 յեացդ մի՛ թողուր զմեզ փորձիլ
 և ըմբռնիլ ՚ի հաղթս չարին մե-
 րովս անհոգուք :

26. Արդ՝ անս դու ինձ զսքան-
 չելի կարգ նորունական աղօթիցս .
 զի նախ՝ եզ զառաջին հայցունածն
 ասելով՝ սբ եղիցի անուն քո , որով
 ուսոյց մեզ խնդրել զփառս կամ
 զպատիւ նոյ . ապա զերկրորդն՝ ՚ի
 վն՝ եբեր ասելով՝ եկեսցէ ար-
 քայուի քո , որով հայցեմք վա-

յեւելի 'ի նոյն փառս ասի . յետ այ-
 նորիկ 'ի նոյն յարեաց զերբորդն
 ասելով՝ եղիցին կամք քո ոպ յեր-
 կինս և յերկրի , որով ազաչեմք
 զամ՝ անթերի պատուիրանսպա-
 հուք մերով արժանի առնել զմեզ
 այնմ երանաւէս փառաց . դարձել
 զչորբորդն 'ի վր կամ ասելով՝
 զհաց մեր հանսպազորդ տուր
 մեզ այսօր , որով մաղթեմք
 նպաստս արժանի լինելոյ յաւի-
 տենից փառացն . զոյգ նմին յաւել
 և զհինգերորդն ասելով՝ թող
 մեզ զպարտիս մեր , որով ալեր-
 սեմք 'ի բաց բաւնալ 'ի մէնջ
 զիտփանարարս այնր երանուէ ,
 որ են մեզք մեր՝ զորս դործե-
 ցաք . հուսկ յետոյ կանխեալ աճա-
 պարեաց դնել զվեցերորդն ասե-
 լով՝ և մի տանիր զմեզ 'ի փոր-
 ձուէ , որով երկուցեալ յանհաս-
 տատուէ մերմէ 'ի բարին , և 'ի
 խնամս բարուէն ասի վատահացեալ
 պաղատիմք անարատ պահել զմեզ

'ի պէսպէս և 'ի բազմադարեան մեղաց :
 27. Ապա 'ի վախճան ամենայնի
 ճահողակի 'ի դէպ գայ այժմ'
 կարգել զյեախն հայցունածն եօթ
 ներուր , որով զմարդասիրու թի
 արարչին մերոյ թախանձեմք ա
 գատել զմեզ յամ չարէ՛ որ հող
 և որ իցէ կի՛ մարմնական , որ ան
 ցեալ մեղք իցէ կի՛ ապագայ .
 վնկ ասէ՛ այլ փրկեա՛ զմեզ 'ի
 չարէ . 'նախ' 'ի փորձութի՛ որ է
 չար . երկրորդ՛ 'ի սասանայէ՛ որ
 է չար և գրգռիչ չարութե՛ , զի
 անդադար նի՛ թէ զչար փորձու
 թիան 'ի ձեռն չարասէր արբա
 նեկաց իւրոց՝ մարմնոյ և ճի .
 երրորդ ընդհանրագոյնս և ախ
 բապէս՝ յամ չարէ՛ որ ինչ միան
 գամ ձգէ 'ի մեզս , և յեաս
 ընկրկէ 'ի շաւղաց առաքինութե
 և կատարելութե . յորժամ մաղ
 թեմք (ասէ սբն կիպրիանոս)
 փրկել զմեզ 'ի չարէ , այլ ոչինչ
 մնայ ինդրելի . յորժամ առ ան

գամ մի հայցեմք զձեռնառուին
 ամ, այնուհետև անքոյթ և անլը-
 տանգ արիանամք ընդդէմ ամի
 զոր ինչ արուեստակէն սատանայ
 և ճա. զի զի՞նչ երկխղ ՚ի կէն-
 ցաղոյս գուցէ այնմ որոյ ամ է
 ինամակալ ՚ի կէնցաղուս. չոր-
 բորդ ՚ի հանդերձեալ անշէջ գե-
 հենոյն որ է չար և յետին չար
 և անդարմանելի չար, զի է յա-
 վստենական չար: Արդ՝ յայս ամ
 չարեաց զերժանիլ աղաչեմք բա-
 նիւ ազօթիցս՝ այլ վրկեան զմեզ
 ՚ի չարէ. իսկ լամբրոնացին ըստ
 առաջնոյն և ըստ երկրորդին
 և եթ առնու յասելն՝ * զփրկուես
 ասելով ՚ի չարէն, ոչ եթէ ՚ի
 սոսկ փորձուէն, այլ՝ համանգա-
 մայն առեալ յամ մերքենայից նք
 (նք՝ սատանայի) ինդրէ զեր-
 ժանիլ. քանզի պատահէ բազում
 անգամ, զի (սատանայ) ոչ ունե-
 լով նիւթ զկամս մեր՝ յարուցանէ
 ՚ի վն մարդկան զարկուածս վտան-

գից . ըստ որում առ յովք է տե-
 սանել և առ վկայսն՝ զորս 'ի
 ձեռս թագաւորացն մատնէր . նոյն
 և առ երանելի հարսն (է տե-
 սանելի) . զի ե՞րբ ունէր զկամսն
 (մե ծի աբբային) անտոնի նիւթ
 'ի չարաչարն զնա հարկանել .
 ներգործ է և այժմ՝ զչարուին իւր
 առ բազումս այսպէս , յորս մատ-
 նիմք ըստ ներողուէն նոյ . կամ
 զի առաքինուի սբցն նորին յաղ-
 թական լիցի անձանց 'ի փառս և
 թշնամւոյն յամօթ , կամ զի փոր-
 ձանօք նր զղջացեալք՝ ընդ պա-
 տուհասեւն նոյ 'ի չար սովորուէն
 'ի բարի փոխեցուք : Արդ՝ յայս-
 ցանէ ասէ՝ փրկեա՛ զմեզ , է՛ր
 վն , զի մեղաւոր եմք , դու պա-
 տուհասեալ ուղղեա՛ . և մի (մատ-
 ներ) 'ի ձեռս թշնամւոյն . և
 թէ արդարք՝ ո՞նչ կամիս , ընկա՛լ ,
 և մի փորձեր . մի՛ դուցէ ըստ
 տկար բնուէս անփորձ գտեալ՝
 կորիցուք , զի ո՛չ նմ ինչ՝ որ ոսկի ,

անխորձ 'ի բով մտեալ ելանէ ,
այլ բազում անգամ փորձելովս՝
և յառաջին գունոյն տժգունի ,
զայս դիտելով առաքեալ՝ գրէր
առ կորնթացիան , հաւատարիմ
է աս՝ որ ոչ տայ զձեզ 'ի փոր-
ձութի առաւելքան զկար ձեր .
այլ արասցէ ընդ փորձուէն և
զելնն , զի համբերել մարթաս-
ջիք . արդ՝ զայս հաւատարմու-
թիս սլահանջէ յոյ ունել , 'ի փոր-
ձողէն զփրկութիւն մաղթելով .
փրկեա՛ ասէ զմեզ 'ի չարէն ॥ 8
Իսկ օգոստոնոս վերածական մեկ-
նուք պարզելով զայս մասն աղօ-
թիցս՝ ուսուցանէ , թէ աստէն
հայցեմք զերժանիլ 'ի չարէ , ք
'ի ցանկուէ և յամ՝ թշուառութէ ,
մտանելով 'ի փառս յաւիտեանա-
կան երանութե՝ ուստի մերժեալ
են ամենայն չարիք :

28. Աւարդ՝ յայսմ վայրի գիտե-
լի է վն կօթնեակ հայցունածոց
նորունական աղօթիցս . զի այժ

աղօթքս է իբրև եօթնարփեան
 աղբիւր ինչ յորդառատ՝ յորմէ
 բղխեն այլ նմ աղօթիցն աեսակք
 եբր նք վասիք, մինչև չիք հնար
 այլ յուամէ՛ և իցէ ըստ օրինի
 յօրինեալ աղօթից չլինել մի յեօ-
 թանց աստի թէ ոչ ըստ նոյն բա-
 ուից գէթ ընոյն զօրութե բանից .
 իսկ որ ինչ աղօթք արտաքոյ եօթն
 հայցուածոցս ունին զօրուի, նմն
 են վայրապար և անօգուտ, և
 մնանդ անբարի. զի որ ինչ մի-
 անգամ բարւոք ինդրելի կայցէ
 մեզ յայ, զայն նմ՝ ուսոյց մեզ քն
 նորն մեր բաւականապէս. ապա
 արտաքոյ սոցին չիք այլ ինդրը-
 ուած բարի. վնգի յնմ աղօթս մեր՝
 որ ըստ այ, պարտ է մեզ ինդրել
 Եւջ քան զնմ ինչ զարարիչ մեր՝
 յոյր սակս հաստեցաքն բովան-
 դակ, որ է համայն երանուի մեր
 և վախճան վախճանաց, և պար-
 տիսք հայցել զնպատամատոյցս
 ՚ի նոյն երանացուցիչն մեր հա-

սանելոյ . և . ահա վն երկոցունց
 խնդրելէացս և եթ կարգելէ են
 եօթանէքին հայցունածք աղօ-
 թիցս . ուն վերագոյնդ մի ըստ
 միոջէ տեսեր . զի երեքումքք
 մաղթեմք 'ի տնէ զփառս կի՛
 զսրատիւ նր , որով և զինքն խկ .
 և չորեքումքք հայցեմք 'ի նմա-
 նէ շնորհել մեզ աջ պաշտպա-
 նուե 'ի դիտեալն մեր ժամանել
 առ ինքն ճանապարհաւ՝ որ կամ
 է հողևոր և մարմնաւոր սնունդ ,
 կամ թողուի մեղաց , կի՛ փրկուի
 'ի փորձուէ , և կի՛ աղատուի յայլ
 ամ չարէ , ապա թէ բաց յայս-
 ցանէ ինքնօրէն իմաստիւք 'ի տնէ
 այլ ինչ խնդրել համարձակեսցի
 որ , այնպիսին դեռ ըմբռնեալ կայ
 'ի փորձուի չարին՝ յորմէ պարտի
 հայցել զերժանիլ . զի ոչ փոքր
 փորձուի է հայցունածոյն լինել ար-
 տաքոյ կարգաւորուի տն մերոյ :
 29. Արդ՝ իբրև զամ կարևորսն
 խնդրեցաք յոյ ըստ կարգի , 'ի

վախճանի յարմարապէս բերիմք 'ի
 փառաբանութի ամենառատ պար-
 զեւատունն մերոյ ասելով՝ զի քո
 է արքայութի և զօրութի և փառք
 յաւիտեանս, ամէն : Այսպէս
 դնեն թարգմանութիք ասորեոց ա-
 ըբացեոց և յունաց՝ յորմէ և մերս,
 բաց 'ի լատինականէն, և ունի թուի՝
 զայս բան յոյնք յիւրեանց յաւելին
 առ բարեպաշտութե և հանդիսա-
 գոյն սովորութե, ունի և 'ի հրեշ-
 տակային ողջունատունութե եզին՝
 զի դու ծնար զիրկիւնն մեր, և
 'ի վերջն սաղմոսաց՝ փառք հօր
 և որդւոյ և հոգւոյն սբյ. քանզի
 յայլ ընտիր օրինական ոչ գտանի.
 և ոչ իսկ կիպրիանոս և ամբրո-
 սիոս ընթեռնուն զայս բան. ունի
 և իցէ, ունի զայս խմատոս. ար-
 քայութի զոր 'ի քէն մաթեցաքս,
 քեզ վայել է. զի արքայութի յա-
 շտեանից քո է բնաւորապէս, որ
 մեր ևս կարէ լինել ոչ բնապէս,
 այլ իբր պարզե 'ի քէն մեզ ճրի-

աբաշխ առաատաճեւնեալ՝ որում
 միայն ամբաւելի զօրուի քո է բա-
 ւական, և ոչինչ ինչիք մերս փա-
 նաքի կարողուի. վս զի քո միայն
 է կարողուի. այլև զչարն և զամ
 փորձանս չարին՝ յորմէ խնդրե-
 ցաք զերծանիլ, մեք մերով զօ-
 րուիք չեմք բաւական ընկճել և
 նկուն առնել, այլ դու ինքնին
 ՚ի բաց վանեա ՚ի մէնջ կի՛ զգեցն
 մեզ զքո զօրուիք՝ որով յաղթես-
 ցուք հակառակամարտ թշնամ-
 ւոյն. զի քո միայն է զօրուի ա-
 մենահնար. մեք քանզի եմք ՚ի
 չքուէ ՚ի գոյ ածեալ՝ յամբաւս
 ՚ի բացեայ ձգիմք յերանուէ քում-
 մէ, և գոյով սկզբնապատիր թիւ-
 րուիք սահեալ բնուէ վիճակեալ,
 և խաթարեալ, ամենևին անզօր
 գտանիմք յօժարիլ ՚ի բարին և
 խորշել ՚ի չարէն առանց քո զօ-
 րուեդ և կարողուէ՝ որով կարող
 ես և հզօր՝ զմեզ ՚ի չարեաց փրկե-
 լով՝ յերանուէն ՚ի վեր հանել:

Այլա այնպիսի բարեխնամ՝ պար-
 զեւողին փառս տամք և բերանա-
 լիր բարեբանեմք և փառաւորեմք,
 որ զմեզ զանարժանս արժանի
 առնէ, այնպիսի մեծամեծ բարե-
 բարուեց՝ փառաց և յաւիտենա-
 կան փառաց՝ զոր ինքն ունի բնուք,
 զայն և մեզ հաղորդեացէ շնոր-
 հօք ՚ի փառս իւր: Վ վախճանի
 լուսնուք լամբրոնացւոյն՝ որ գե-
 ղեցիկս բարբառի ՚ի սմին բանի.
 ասէ * սիր՝ դու ես ՚ի վր՝ մեր.
 ՚ի ներքոյ քումի թագաւորուե-
 եմք գրաւեաց, միտար իշխանու-
 թի չարին՝ զժառայս քումի թա-
 գաւորուե վտանգել, բայց ակս՝
 թէ ո՞նչ յարմարի բանք աղօթիցս
 և նորին կասարումս, զի քոյ է
 արքայուի և զօրուի, իմ թէ փոր-
 ձէ և վտանգէ զոյգ այն՝ որ իշ-
 խանուի ունի ՚ի վր՝ նր, և չար-
 չարէ այն՝ որ զօրուի ունի չար-
 չարելոյ. մեք քոյ եմք սասց-
 ուամք և արարածք ՚ի ներքոյ քում

հայեաց աչս իմանալիս յուղիղ
 տեսութի խորախորհուրդ և հոգե-
 շարժ իմաստից բանիս, և ընթեր-
 ցանելեացդ հոգեհրահանգ լսե-
 լիս ամսահաճոյ ըղձից զամբարեալ
 իմաստիցն զօրութիս շտեմարանել
 'ի հոգիս ձեր հոգեսիրացդ՝ 'ի
 'ի փառս կուսածնին յնի և 'ի պա-
 աիւն ամսածին կուսին :





Ո՛ր ջոյն քեզ մտրիամ՝ լի շնոր-
հօք, տր ընդ քեզ. օրհնեալ
ես դու ՚ի կանայս. և օրհնեալ
է պատուդ որովայնի քո յն:

Արքուհի մտրիամ՝ մտոյր տոյ, բա-
րեխօսեան վն մեր մեղաւորացս
այժմ՝ և ՚ի ժամու մահունան մե-
րոյ. ամէն:





Մեկնուէի կուսանսուէր
ողջունի :

1.

Մեկնուէի կուսանսուէր
ողջունի մինչև
ցիկն կան յաւատարանին զուկա-
սու յայլև այլ տեղիս սիւռեալ .
մեք զայնս անտի հաւաքեալ լի
բովանդակ հատուցուք զբան
մեկնուէց նոցին , անխրէսզ զհեա-
երթեալ հաւատարմութե անսայ-
թաք վարդապետուն սբց հարց
և ուղղախառ իմացուածոյ իմաս-
տուն վարդապետաց եկեղեցւոյ ,
միանգամայն նշանակելով ուր ու-
րէք կայցի տարբերուի մուծեալ

'ի պէսպէս թարգմանուէց այնց
 տեղեաց , ուն ունիս տեսանել
 յընթացս մեկնուես :

Ծանիր երկրորդ , բովանդակ
 ողջոյնս բաժանի յերիս մասունս .
 զաւաջինն ասաց հրեշտակն՝ սկը-
 սանելով յողջունէ մինչև ցայն
 տեղի՝ որ ասէ , օրհնեալ ես դու
 'ի կանայս . զերկրորդն յաւել
 եղիսաբեթ ասելով և օրհնեալ
 է պառզ որովայնի քո . իսկ զեր-
 բորդն սահմանեաց սբ եկեղեցի՝
 'ի բաւէն յս մինչև ցվերջն . վնց
 աւաջինն է բան հրեշտակի մաւնդ
 սոյ՝ յորոյ 'ի դիմաց խօսէր հրեշ-
 տակն . երկրորդն է բան սոյ կմ
 մաւնդ հոգւոյն սոյ՝ որով խօսէր
 եղիսաբեթ . և երրորդն է բան
 եկեղեցւոյ՝ որ է ինելամուտ և քաջ
 թարգման անծային կամաց . այլ
 քչի յաւաջագոյն հրեշտակն սկառ
 զսոյն , յայն սակս նմա իբրև աւա-
 ջին պատճառի ընծայի ողջոյնս ,
 և կոչի՝ հրեշտակային ողջունա-

առձուռի կի՛ մ ողջոյն . երբեմն ևս
 յորջորջի՛ կուսական ողջոյն , զի
 բոլորն եղև առ կոյսն . այլև եր-
 բեմն պարզամբ ասի ողջոյն , զի
 յողջունելոյ սկզբնաւորի , կի՛ մ ըս-
 կիղբն նի՛ է ողջոյն : Ա՛ռջ՝ առաջին
 մասն ողջունիս է յարգական և
 բերկրական . երկրորդն ներբողա-
 կան և հրաշական . երրորդն մարգ-
 թողական և խոնարհական :

Ա՛ռաջին մասն գովելի է ըստ չո-
 բից . նախ՝ զի այս ողջոյնս առձա-
 կուսին է զիմաց ամենամեծին
 ւնց . երկրորդ՝ զի պատգամաւոր
 ողջունիս ո՛չ էր մարդ որ երկ-
 բածին , այլ՝ աննիւթական հոգի՛
 երկնային զու՛արթունն , և ո՛չ ո՛
 և իցէ հրեշտակ , այլ գաբրիէլ ,
 որ է զերազոյնն յերկրորդ դա-
 սու երրորդ քահանայապետուէ ,
 այն է՝ հրեշտակապետ , ուն ասի
 ՚ի շարականի՛ արեգականն ար-
 դարուէ ՚ի աառն ց . երրորդ՝ զի
 որ զողջոյնս ընկալաւ՝ կոյս է , և

ոչ ո՛ր և իցէ կոյս , այլ՝ կոյսն մա-
 ըխամ . չորրորդ՝ զի անմեղ էր և
 յամմեղաց զերծ : Արկրորդ մասն
 գովելի է ըստ երկուց . նախ՝ զի
 այն գովասանք ՚ի հողւոյն սբյ
 ազդեցան՝ որով խօսէր եղիսա-
 բէթ . վս այն ամենեւին աներկ-
 սճանալի է վկայուին . երկրորդ՝
 զի սխրալի օրինակաւ առացան այն
 գովեստք , որ զմեծուի իրացն
 ցուցանէ , ուր ատեցես սատրե :
 Արրորդ մասն գովելի է ըստ ե-
 ըից . նախ՝ զի է ճայն անարատ
 հարսին քնի՝ որ կարդայ առ կոյսն
 ՚ի տունէ և ՚ի գեշերի . երկրորդ՝
 զի այն ազաչանք ամեն զմեղ ՚ի
 կեանս յաւիտենից՝ քան զոր չէք
 ինչ պատունականագոյն . երրորդ՝
 զի այս աղօթք յոյժ կարևորա-
 գոյն են մեզ . զի կարդեալ են
 վս ընդունելոյ մեզ զշնորհս և
 զփառս . արդ՝ որ ինչ կարևորա-
 գոյն է՝ արժանագնով է :
 Տանիր երդ , զի այս աղօթքս չեն

շարագրեալ 'ի նախնեաց անտի
 մերոց թարգմանչաց, այլ 'ի յեռ-
 նոց. վս'այն շարագրուին չէ' այն-
 չափ յատակ. վս'զի առ ժմիօք
 նախնեաց մերոց տակաւին չէ'ր
 այնպէս յազգս մեր մուծեալ յա-
 ճախ սովորուի ասելոյ զազօթքս,
 ուն առ յափնս և առ յոյնս յա-
 ճախեալ է 'ի սկզբանէ հետէ,
 այլ 'ի յեռին դարուց անտի և
 այսր այնպէս հանդիսացաւ գոր-
 ծածուի սորա 'ի մեզ, մինչև
 լինել մի յերևելի և 'ի ստեպ
 ազօթից, ուն և արժան իսկ է.
 'ի սոյն սակս բնաւ իսկ չկամե-
 ցաք իտիտիսել զկարգ շարագրու-
 թեն կ'նորոգ թարգմանուք յօ-
 րինել զայն. մի' զի չէ այնպէս
 կարի աղաւաղ իբրև զայլ իա-
 թարեալ շարագրուին իտաւնա-
 խորթս. և միւս ևս' զի մի ոմանց
 գուցէ պատճառս տայուք կար-
 ծելոյ' թէ առ 'ի մէնջ շարագ-
 րեալն իցէ այլ իմն ազօթք օտար

յայնմանէ՛ յոր ինքեանք ՚ի սկըզ-
բանէ սովորեցան աղօթել . և
այնպէս պախարակեալ մերժեա-
ցեն և զմեկնուիս համայն , և մեք
ձեռնթափ ելցուք ՚ի յուսոյ մեր-
մէ՛ որով զխտէաք զհոգևոր սը-
տուղս պէսպէսս՝ զորս քաղել
ուենին յանձինս բարեմիտ ընթեր-
ցասէրքն առաջիկայ գործոյս :
Ապա զայս նմ յառաջագոյն ծա-
նուցեալ՝ խոնարհամուք մատի-
ցուք ՚ի անսուի բանիս :

2. Մեկնի , ողջոյն քեզ , քի է՛
ո՞ղջ լեր՝ բերկրեա՛ կի՞ ուրախ լեր ,
ոնք դնի ՚ի մերում թարգմանուե
համաձայն յունականին , ուր ասի՛
խէռէ , քի՛ ուրախ լեր , ելեալ ՚ի
բայէն՝ խէռօ , որ նշանակէ ու-
րախանալ կի՞ բերկրիլ . սոյնպէս
դնի և յարաբացւոց թարգմա-
նուե . իսկ ՚ի լատինականն դնի՛
ave աւէ , ո՞ղջ լեր , որ զնոյն ի-
մաստ բարէ , զի և ՚ի մեզ իսկ
անխտիր ուրեք ողջոյն ասի , և

ուրեք՝ ուրախ լեր, ուն է տեռա-
 նել՝ի շարականի՝ի կանոնն աւե-
 տեաց և ծննդեան և այլուր :

Աւ հրէայս սովորական ողջու-
 նատունութիւնն այս է՝ ՚ի շոնա շալով
 լախ, ՚ի է՝ խաղաղութի ընդ քեզ .
 ուն դնի՝ի թարգմանութե ասոր-
 ւոց . զի այսունիկ սովոր էին վա-
 ըիլ հրէայք, յորժամ կամէին
 բաւնալ՝ի սրտէ ուրուք զերկիւզն
 և ցնծալից աւետիս տալ . ըստ
 սմին օրինակի հրէշտակապետին
 դաբրիէի կամեցեալ՝ի բաց փա-
 րատել՝ի սրտէ կուսին զերկիւզ
 զարհուրանաց ընդ նորատեսիլ
 երևոյթն և ընդ նորանշան աւե-
 տաբերութիւնն ասէ, ողջոյն քեզ
 կի՞ ուրախ լեր . ուն թէ ասէր,
 քնջ լեր, զօրացո՞ զսիրտ քո,
 բերկրեա՞ յանձն քո . մի խառովե-
 ցուացէ զքեզ տեսիլ կերպարա-
 նացս . այլ բեկրապատար հոգ-
 ւով՝ի միտ առ՝ զոր ունիմ ասել
 քեզ՝ զմեծամեծս նոյ : Անգի թէնն

կոյսն չէր առնելն անընտել կե-
 նակցուե հրեշտակաց յայլ բոլ
 նուազս . այլ յայտմ կարի տարօ-
 բնակ էր յայլոց անտի յանկար-
 ծակի տեսիլ հրեշտակին , և ան-
 սովոր ողջոյն նր . զի ՚ի բթթել
 ականն թափանցանց դրօքն փակե-
 լովք անդէն գտաւ ՚ի ներքս ՚ի
 տեղւոջն՝ ուր էր կոյսն առան-
 ձինն . թող զի երևեցաւ նմա ՚ի
 կերպարանս առն , յորմէ ոչ սա-
 կաւ ահ պատեաց զամբիծ կոյսն .
 զճննդենէ լուր եբեր նմա՝ որ
 ուխտիք նուիրեալ էր նոյ զամ-
 բողջուի կուտուե իւրոյ , որ կարի
 սարսափեցոյց զնա . և ահա զայս
 ամենայն երկիւղալեց կիրս՚ի մտաց
 կուսին ՚ի բաց բաւնալ կամելով
 հրեշտակն՝ ասէ , ողջոյն քեզ .
 քեզն ասել ոչ սակաւ յարգանք ,
 այլ անհամեմատ պատուոյ նշա-
 նակ . զի յայնժամ նամ մարմինս պէս
 պէս մեղօք ապականեալ էր զճա-
 նապարհ իւր , և միայն կոյսն

դու աւ զերծ յամ արատոյ մեղաց ,
 զի 'ի նմա ոչ եղիա սեղե և . ոչ
 մի ինչ 'ի մեղաց անախ , ոչ սկըզ
 բնականն , ոչ ներդործականն , ոչ
 մահուչալն , ոչ ներելին , և ոչ
 որ զինչ և իցէ . մայ ասէ քեզ
 որ սբ ես սիրելի սբյն խորայելի .
 քեզ որ միայնդ ես անարատ յամ
 հողանիւ թեայս . քեզ զոր միայն
 ընտրեաց յամ երկրածնաց ամն
 ամի . քեզ յորում միայն հաճե
 ցաւ հանգչիլ լոյսն անեղական .
 քեզ յորմէ և եթ ախորժեաց առ
 նուլ մարմին բնակեալն 'ի լոյս
 անմատոյց : Յասացելոցս 'ի միտ
 առ ինձ ասակն զայլաարագ ար
 բերուի մատչելոյ չար հրեշտա
 կին յառաջին կոյսն եւայ , և բա
 ռի հրեշտակին յերկրորդ կոյսն
 մարիամ . քզի սա մատուցեալ ասէ
 ողջոյն քեզ . իակ նա մերձեցեալ
 ասէ . զի է , զի ասաց ամ թէ յամ
 ծառոց որ իցին 'ի ներքս 'ի
 դրախտի այդր , մի ուսիցէք .

տեսանե՞ս, զի գաբրիէլ բերկ-
 բուն արկանէ՛ ՚ի սիրա մարիամու,
 այլ տատանայ խուփուի սերմանէ
 ՚ի միտս եւայի. զի ՚ի վայրասպար
 և ՚ի վսասաբեր քննութի գրգռէ
 զնա հակառակ կամացն նոյ. վնյ
 խոհական խորհրդով խորհէր լը
 միտս իւր մարիամ թէ սրպիտի
 ինչ իցէ ողջոյնն, զի ողջոյն քեզ
 կի՛ ուրախ լեր ասելն. զի մի իցեն
 պատրանք շար ողւոյ, ուն առ
 եւայ. ապա մարիամ ընդունե-
 լուք այսր ողջունի եբարձ զվնա-
 սասպարաութեւայի, որով անկաք
 համօրէն ընդ անիծիւք պատու-
 հասիցն նոյ, ուն ասի ՚ի շարակա-
 նի, * քե լուծան կնիք դասա-
 պարաութե, և քե կանգնեցաւ
 մեղուցեալ մայրն գլորեալ |. ՚ի
 շար՝. թ. յազագս այսորիկ որի՞
 եւայ կոչեցաւ մայր նմ կենդա-
 նեաց, իբր զի ՚ի նմանէ սերե-
 ցան նմ մարդիկ մարմնապէս,
 քանզի եւայ յեբրայական լեզու

ասի որ խաււա՛ որ թարգմանի՛
 կենսական կի՛ կենդանարար՛ զոր
 եօթանասունք թրիմնեցին այսպէ՛
 յունարէն, Հոն՝ զօն՛, քի՛ կեանք .
 նոյնպէս և աւաւել ևս կոյսն մա-
 բխամ՝ եղև մայր ամ՝ հոգւով կեն-
 դանեաց ՚ի կեանս յաւիտենից .
 զի նմա միայն ասացաւ ՚ի հրեշ-
 ասակէն՝ ողջոյն քեզ, որ և նշա-
 նակէ՛ կեցցես, զի որ ողջ է՛
 կեայ . յորմէ և ցուցանի ասել՛
 կեցուցես, քի՛ լնդունելութիւն
 ողջունի աւիթ լիցիս յաւիտենա-
 կան կենաց մարդկան . յայս միա
 ասի ՚ի շարականի՛ * խորհուրդ
 կենաց և մայր կենդանութե ॥ . ոպ
 քաջ իմաստասիրէ և սքն եպիսիան
 ՚ի հերեաի՛ . հի՛ :

3. Իսկ այժմ՝ մեք՝ որ եմք պայ-
 ծառ հաւատովք միածնի որդւոյ
 կուսին մօրս մերոյ մարեմայ կեն-
 դանացեալ որդիք, ՚ի պաղատել
 մերում աւնա զօրհանապաղ պար-
 ախիք բարեաւել աւնա լէ՛ հրեշ-

տակին՝ ողջոյն քեզ, որ ուրախա-
 ցեալ բերկրիս՝ փառաց ՚ի փառս
 բարձրացեալ յառազասան լուսոյ
 յանմտանելին եղականացս ի եր-
 րորդուէն, աղաչեմք յիշեան զան-
 տխրանէն զխնդալից զողջոյնն զայն՝
 զոր ընկալար յոճաբան բերանոյ
 զոճարթնոյն գաբրիէլի, որով
 ցնծացեալ զոճարճացար, արդ
 զոճարթացո՛ւ և զմեզ զպանդխ-
 տեալքս յարտօսրալից վայրս նրժ-
 գեհուէն, մասնաւորելով մեզ նշոյլ
 մի ՚ի ծովահանգոյն խնդուեց
 քոց, որով փոքր մի սգի առեալ
 հանգիցուք ՚ի տխրութեց և ՚ի
 տառապանաց բազմադժակի հի-
 ճանդուեց մեզաց մերոց, և կի՛
 յուշ ամելովդ զոր լսելայ քո զա-
 ւետից բերկրանաց՝ գոչեմք առ
 քեզ ընդ մարգարէին դաւթի
 ասելով, լսելի՛ արա մեզ զցնծու-
 թի և զուրախուի, և ցնծացեն
 ոսկերք մեր տառապեալք, զի
 այս խկ է մեզ ծայրագոյն խնդու-

Թէ արարող՝ մաղթել քո 'ի մի-
 ածին որդւոյդ վն մեր շնորհս
 զղջուէ 'ի մեզաց՝ շնորհս ապա-
 շաւանաց և արտասուէաց և շնորհս
 փոխութուէ վարուց :

Արդ՝ աստէն ունիմք զզուշութիք
 'ի միտ աւնուլ, Թէ գիտարդ պար-
 տիմք մատչել 'ի սոյն աղօթս յու-
 ջունել զտիրամայրն, ստէպ ստէպ՝
 հաստատուիք հաւատոյ՝ լի յուսով
 խոնարհ ապաւինուիք և նմ սրբ-
 բուիք սրաի, Թէ ոչ հանդոյն՝
 դէթ ըսա կարի՛նման նք հրեշտա-
 կին դաբրիէլի. ապա Թէ 'ի բարե-
 մասնուեց աստի Թափուր իցեմք,
 ասկաւին մի վերջացուք 'ի մատ-
 չելոյ առ կոյսն՝ որ գթած է ապա-
 քէն և փորձ տկարուէս մերոյ, որ
 կարող է փորձանաւորացս լինել
 օգնական, և առաքինուեցս այ-
 սոցիկ աւնել զմեզ ստացող. մի-
 այն Թէ մի պինդ կալցուք զյա-
 մաւուի շար կամացս. զի ո՞ր մայր
 է՝ որ ոչ աղէկիղի ընդ խեղաթիւր

բարս որդւոյն , և ոչ ճգնիցի յու
 զիդն ամէլ զնա պողոտայ . զի եթէ
 մէք ըստ պօղոսին բարբառելոյ՝
 անարգագոյն անդամոց առաւել
 լագոյն պատիւ առնեմք , գթալից
 կոյսն որչափ ևս . և զի՞նչ անար
 գագոյն ք զմեղաւորն . ապա յորդո
 րամիտս լիցուք և կամակար փու
 թաջան մատչիլ առնա իբր յամուր
 ապաստան մեր . զի մայր է մեր ,
 և ոչ գարշի՛ի մեղաւորացս :

4. Ան՝ որք ասեն , թէ ողջունիւ
 չէ՛ արժան կալ յաղօթս . բայց
 զայսպիսի արգելական պատուի
 րան չունիմք ուստեք , ոչ ՚ի սք
 գրոց և ոչ յաւանդուէ՛ յորոց
 միայն յայտնի լինին մեզ կամքն
 ասի կ պատուիրանք սք . զի աւա
 սիկ ասմ ասժաշունչ գիրք մաւնդ
 նոր կտակարանք պարզաբար և
 անխտիր յորդորեն զմեզ յամժամ
 կալ յաղօթս և մի ճանճրանալ ,
 և չառնեն երբէք խտիր ը մէջ ող
 ջունի և հայր մերի . նոյնպէս

ասեն և համորէն սբ հարք ՚ի
 սկզբանէ անախ և այսր: Սակայն
 ասեն, թէ չեմք արժանի ողջու
 նելոյ զկոյսն . զի ոչ եմք իբրև
 զհրեշտակապետն զաբրիէլ մա
 քուր և անմարմնականին ունող
 բնուէ, այլ մարդիկ բազմամեղք
 և հողանիւթեայք: Բայց ասելի
 է, թէ ողջոյնս է մաղթողական և
 և խոնարհական սղաղատանք՝ ու
 բում չի հարկ, թէ մաքուր է ան
 մաքուր՝ արդար է մեղաւոր ոք
 ասացէ զայն, այլ այս միայն սղա
 հանջի, զի աղաչաւորն մտադիր
 յարդուք մատուցեալ յաղօթս՝
 հայցեսցէ զպատշաճաւորս յուսով
 ընդնելուէ . մանաւնդ թէ ըստ
 սմ՝ ոք յաստի կեանս որչափ և սբ
 իցէ, իբազէտ լինելով անձին
 տկարութե՛ն՝ ըստ որում չիք ոք
 աղատ յսմ՝ մեղաց, զանձն մեղա
 ւոր համարելով պարտի մատչել
 յինչ և իցէ աղօթս . ապա թէ
 ոչ՝ յեկեղեցւոյ անախ նղովիւք

շափ հերքեալ է զանճն զլիտ
 վին անմեղ համարիլ, և թէ որ
 թէ և մեծամեծ մեղաց իցէ պար
 տաւոր, այնպիսին առաւել ևս
 կարօտի այսմ աղօթից, զի դի
 մելով յոտս զերամաքուր կուսին՝
 մաքրեսցի յազակողուէ մեղացն :
 Թերևս ասիցես, յայլ աղօթս
 մատչիմ, և ոչ յայս. և ես պքեզ
 հարցանեմ. ի՞նչ արդեօք յայլ ա
 ղօթս մատչիս, և ոչ յայս. զի դու
 որ զայդ ասես, կամ արդար ես, և
 կամ մեղաւոր. եթէ արդար՝
 չունիս ինչ խղճել, զի ասա բառ
 քո բանիդ իբրև հրեշտակ մատ
 չիս. և եթէ մեղաւոր՝ մատի՛ր,
 զի մաքուր կոյսն սրբեսցէ զքեզ
 ՚ի մեղացդ, և իբրև զհրեշտակ
 լիցիս : Ասես դձլ կան այլ ա
 ղօթք առ կոյսն, զորօրինակ՝ ան
 կանխիք առաջի քո անձամին ևն.
 զայնս աղօթեմ, և ոչ զողջոյնն.
 դձլ և ես հարցանեմ զի՞ է, զի
 զայլս աղօթես, և ոչ զողջոյնն,

մի թէ ողջոյն ոչ է աղօթք . եթէ
 յաղօթել քո զանկանխմքն՝ խոնար-
 հունի ցուցանել կամիս կի՛ զանար-
 ժանուխդ խոստովանիլ , ով ասէ
 ցքեզ , թէ յասելից զողջոյնն ամ-
 բարասաւանութի կացցես յաղօթս
 կի՛ զանձնդ արժանաւոր համա-
 բեացիս . զի արդարև անկանխմք ա-
 ռաջի քո ասելն զանձին խոնարհու-
 թի և զանարժանութի ցուցանէ՝ որ
 միշտ զօրութի պարտի գտանիլ և
 յողջոյնն . իբր զի յամի պարտիմք
 մատչիլ առաջի կուսին պատկա-
 ռանօք և նմ կարևոր յարգութի ,
 գիտելով թէ ոչ միայն մայր է
 մեր , այլև նո՛ճամայր պատուե-
 լին 'ի սրովբէից և 'ի քրովբէից
 և յամ՝ անմարմնական զօրաց :

Այց արդ՝ եթէ չէր արժան
 աղօթել զողջոյնս , ապա նոյնպէս
 չէր օրէն ասել և զայն տուն
 շարականի 'ի ճրագալուցին՝ ուր
 ասի , * ողջոյն ընդ քեզ մտնիսմ՝
 'ի քեզ սբ հոգին եկեացէ , և զօ

բուհ բարձրելոյն 'ի վիճ. քո հո-
 վանասցի | . շար" . Գ. որ բովան-
 դակ և յայտնապէս է բան հրեշ-
 տակի . սպա 'ի բաց բառնայ
 պարտ էր և զչումարք խմբիցն
 արարեալ 'ի մերմէ սբյն գրիգորէ
 նարեկացւոյ . քանզի անդ կան
 եղեալ բզմ ուրեք իմաստք ող-
 ջունի . ուն այն՝ խրախացիք և
 ճայնի՛ ողջունի դաբրիէլեան ա-
 ւետեացն բերկրեալք 'ի կանայս .
 և այն՝ իրախացիք յողջոյն նախըն-
 ծայ երկնային աւետաւորին, և այլ
 յոլովք անտանօր՝ որք զնմանասիպ
 միտս ընծայեցուցանեն հանդոյն
 ողջունի, որպէս և տեսանես :
 'Իճլ' ը աւածին, որ զօրէ 'ի
 փոքրն, ևս աւաւել զօրէ 'ի
 մեծն . սպա թէ չիցէ մեզ ար-
 ժան ասել զողջոյնն, ևս աւա-
 ւել չէ արժան ասել զհայր մերն՝
 որ մեծ է քան զայն . զի ողջոյն
 'ի հրեշտակէն ասացաւ . իսկ հայր
 մերն ել 'ի բերանոյ բանին սոյ՛

որ Խորն է հրեշտակաց : թէ աւսես , զԽորունական աղօթան ինքնքս ուսոյց մեղ աղօթել , այլ զողջոյնն ոչ . բայց այս անկարկատելի պատճառաբանութի է . զի գոն այլ բիւրաւոր աղօթք՝ զորս քս ոչ ուսոյց , սակայն զայնս ասեմք առ հմրի , ունիւ և յայտ է . ընդ որս դասի և աղօթք մանասելի թագաւորին՝ որ և ոչ ՚ի կանոնականն սք գրոց համարի է :

Եւ ևս , եթէ փաստ չասելոյ մեր զողջոյնն լինէր այս , զի ՚ի հրեշտակէն ասացաւ , և մեք անարժան եմք հրեշտակաձայն բարբառիլ , ապա զիարդ անպատու հաս զերծանէաք՝ որք զօրհանապազ գոչեմք ՚ի պատարազի՝ սք սք սք սք զօրունց ևն , զոր սերուիլէք երգեն սոյ անդադար , ունիւ կայեն ետայեաս ՚ի Գ. 2. և յովհաննէս ՚ի յայտն՝ Գ. 8. ուր թողցուք և զերեքսրբեանն ՚ի հրեշտակէն ասացեալ՝ զոր յսմ՝ աւուր ասեմք .

մնւնդ թէ բնաւ իսկ անարժան
 լինէր մեզ ասել զերգն մարիա-
 մու կուսին՝ զմեծացուցէ , զոր
 ցամ աւուր ոչ միանգամ եւեթ ,
 այլ երկիցս և երկիցս ասեմք յե-
 կեղեցին . զի սա ոչ այնչափ պա-
 դատական է , ուն ողջոյնն խառն
 ՚ի պաղատանաց և ՚ի գովեստից
 է լծորդեալ , այլ զուտ գովատա-
 նական , և զի ասացաւ ՚ի բերա-
 նոյ մեծամօրն՝ որ թագուհին է
 հրեշտակաց , և զեր քան զեւ-
 բովբէս և զքերովբէս , այլ ոմ
 որ պանծացի յանձն ընդ տիրա-
 մօրն զուղաձայն բարբառ արձա-
 կել ասելով՝ մեծացուցէ անձն
 իմ զսր . վնզի նա միայն մարթա-
 ցաւ ասել զայս , որ ՚ի մաքրական
 որովայնի իւրում տարաւ զլոյսն
 անեղական բնակեալ ՚ի լոյս ան-
 մատոյց զնայն ինքն զմեծն բալորից :
 Ապա քաջայայտ երևի , թէ չիք
 ուստեք իրաւացի պատճառ ան-
 արժան համարելոյ զազոթեւն ող

ջուռնիւ՛ . այլ զայս մի ինչ յայանի
 տեսանեմք , թէ այսպիսի դառ-
 նաթոյն կարծիք կ'ի կասկած է
 գործ որոմնացան սատանայի հա-
 սարակոց թշնամւոյն՝ որ անհան-
 դիստ ձկտիսեմնել 'ի սիրտ ոմանց
 զիւր դաժանաբեր ապականու իս՝
 որով մարթասցի զընտիր ընտիրս
 'ի բարեկրօնիցն խոտորեցցնել 'ի
 պաշտօնատարուէ՛ , որ առ մծա-
 մայր կոյան՝ որում միշտ ջերմ կրօ-
 նասէր գառա եկեղեցիս հայաս-
 տանեայց , զի գիտելով գիտէ չա-
 բաշուք բանասարկուն , թէ որ խ-
 պառ յետս ընկրկի յապաւինելոյ
 'ի կոյան , այնուհետեւ դիւրա-
 թակարդի 'ի հաղթս իւր :

Ապա զայսոսիկ գիտելով մեր՝
 պարտիմք հողւով չափ գուն գոր-
 ծել մի ինչ պակասեցուցանել 'ի
 պատուոյ ամենապատիւ՛ կուսին
 և մի իւր վերջանալ յեռանդա-
 գին ծառայուէ նր , և մի զնր
 աղօթս ինչ 'ի բաց թողուլ . ա՛ղէ

նմանող լիցուք սբց հարցն մերոց՝
 որք յսմ տաղս և յսմ շարականս
 անյիշատակ ոչ թողուն զսիրալի
 անուն գերամաքուր կուսին ,
 մունդ յաւագ օրհնունն՝ յորս
 վերջինն յերկց տանց յսմի կարգի
 ՚ի պատիւ և յաղաչանս առ նա .
 և եթէ ՚ի մատինս յայսմիկ լա-
 տին եկեղեցին՝ բաց յայլոց անտի
 պանծայ յիւրն բեռնարդոս մեզ
 բաբուզիս վարդապետ՝ որ արժանի
 դուռ քաղցրանալոյ ՚ի սուեանց
 տիրամօրն՝ յորոյ ՚ի սէր վառե-
 ցաւ համայն , ՚ի տանէս հայոց
 շուշանատիայլ ծաղկեցաւ մերս
 գրիգոր նարեկեան արարչնկալ
 աիրուհւոյն սիրով բոցավառ բոր-
 բոքեալ . այսպիսեացս ասեմ նմա
 նող լիցուք , յորոց մին զգիրս իւր
 ելից բանիւք ողջունի , և զմե-
 ծամեծս և զհրաշայիս բարբառե-
 ցաւ զկուսէն , և միւսն ոչ միայն
 բազում ուրեք յաղօթամատոյց
 գիրս իւր բովանդակ եռանդեամբ

յիշատակէ զկոյնս, այլև զառանձին
ճառս դովեատից և պաղատանաց
յորինեալ ընծայեաց նմո, և այն՝
ձևով ողջունատուն թէ նովին ի
մատիւք և նմանօրինակ այսմ՝ ա-
լոթականն ողջունիս, որպէս և ա-
սացաք ՚ի վերոյ:

5. Արդ՝ հայեացուք և ՚ի հետա-
զայ բառն բնաբանիս՝ մարիամ,
այս բառն զոյ յաւիտարանի,
այլ բացայայտուն աղագաւ յաւել
զայս եկեղեցին, զի ցուցցէ՝ թէ
առնով լինի կի՞ եղև ողջոյնս այս,
ոնք թէ ասէր. ողջոյնքեզ՝ ու-
րանս լեր մարիամ՝ զոր միայն ընտ-
րեաց նծ ՚ի մայրուի իւր առա-
ւել քան զամենեւին, և յիրաւի
անուն քո կոչեցաւ մարիամ՝ լու-
սաւորուի, զի զքեզ և եթ լուսա-
ւարեաց արեգակն արդարունք քս.
այլ զայս բաղմօք պարզեացուք
ստորև:

6. Մի շնորհօք, ոմանք ՚ի մոլո-
րեցուցչաց զայս թարգմանեցին,

ճրի սիրեցեալ . զի համարեցան՝
 թէ արդարքն՝ ՚ի ներքուստ չեն
 արդար , այլ միայն արտաքուստ ,
 ունի թէ այս իցէ իմաստ բանին .
 իսկ ՚ի բարուէ իւրմէ զարդարս
 համարի արդար , թէնք և նք ի
 ցեն մեղաւոր՝ . բայց այս իմաց .
 ուստի է հերեփակոսական , և բա
 նին իսկ անյարմար . քանզի ՚ի յու
 նարէնն դնի *καχαραίωμένη* քէխա
 ուիթօմէնի՝ որ է կրաւորական
 ընդունելութի աննցեալ ՚ի բա
 յես խառիթօօ , որ է հաճոյա
 ցուցանեմ , զի աւ յոյնս բայն յան
 դեալ ՚ի օօ՝ տայ նշանակել զա
 ուստութի ինչ և զլիութիւն , որնք
 և առ մեղ յաճախականն . արդ՝
 բառդ քէխառիթօմէնի համե
 մատի է բրայական բառիս *καχο* մու
 խանա՝ որ տիրապէս նշանակէ՝
 հաճոյ եղեալ կի՛ շնորհօք լցեալ .
 վնդի իսկ ոչ զորք դատէ հաճոյ ,
 բայց եթէ զնա՝ որ իսկուք իցէ
 հաճոյացեալ . և ՚ի գործելն նոյ

զորք արդար՝ իրօք յարդարէ և
 շքեղապարդէ զնա տիրապէս ար-
 դարուք և իսկական շնորհօք .
 վնջ քէ խառնութեանն նոյն է ընդ
 այսմ՝ լի շնորհօք . ուն զնեն թարգ-
 մանութիք լատինացւոց՝ ասորւոց՝
 արաբացւոց և այլոց . զի մարդն
 շնորհօք միայն հաճոյ լինի ուն .
 և քզի լիութի շնորհաց է լիապա-
 տար բերկրութի հոգւոյն . վնջ
 թարգմանիչք մեր եղին՝ բերկ-
 րեալ . այլև զբերկրին ևս նշա-
 նակէ յունական բառն : Արդ՝ լի
 շնորհօքն զերիս ինչ ցուցանէ .
 նախ՝ թէ ամենօրհնեալ կոյսն առ-
 յոն զարդարեցաւ լիազոյն շնոր-
 հօք զեր քան զսմ՝ արդարս և
 զսքս . զի այսպիսի գերօրինակ
 լիութի շնորհաց կուսին միայն է
 սեպհական . իբրզի առատազեղ
 շնորհօք գործեացի քաջայարմար
 և արժանաւոր անձամայրութե .
 երկրորդ՝ թէ այսպիսի շնորհօք
 հրաշախաւապէս հաճոյ դատա-

ան, և համօրէն հրեշուակաց նի՛
 ամենասիրելի ամենազեղ և ամե-
 նապատիւ, զոր քս առաւել քան
 զայլս ընտրեաց ՚ի մայրուն իւր.
 և երո՛ք թէ անպայման բերկրու
 թեամբ զեղաւ հոգի նր. քանզի
 զյսժն ամի՛ որ է ամ ինչ կի՛ ինք.
 նաբուն բարի, բովանդակ եգիտ
 և ընկալաւ համայն ՚ի հոգի իւր,
 սոյն այս այն բերկրուն է՛ զոր իւր
 իակ օրհնեալ բերանով յայանի ե-
 ցոյց եղիսաբեթի յասելն՝ * ցնծա-
 ցաւ հոգի իմ յսժ մրկիչ իմ ॥ .
 ՚ի զուկ՛. ամ. 47. քանզի այնպիսի
 քաղցրութիւն ցնծուե լցաւ լիացաւ
 հոգի նր, մինչև առ պատարուն
 զեղմանն չհանդուրժեալ՝ անդէն
 լուծեալ ՚ի մարմնոյն սլանայր դա-
 դարէր յսժ, եթէ ամրն առան-
 ճին զօրութիւն իւրով զնա ոչ պա-
 հէր ՚ի մարմնի. և նովին ինդուե
 յետ վճարելոյ ամաց բովանդակ
 կենաց իւրոց ել ՚ի մարմնոյն՝ ոչ
 իւրիք հիւանդութիւն, այլ սիրով և

նովին բերկրուիք և վատաբանօք
 տեսանելայ զորդի իւր և վայելելոյ
 ՚ի նմա . ուն հաստատեն երևելի
 անարքանք : Նայց ՚ի միտ աւ , զի
 երկու է լիութի շնորհաց . մի՛ լն աւ
 աւարկային , որ է նոյն իսկ շնորհքն .
 և միւս ևս՝ ըստ ենթակային՝ որ
 է ընդունող շնորհաց . լիութիւն
 շնորհաց ըստ աւարկային ասի ,
 յորժամ ստանայ որ զամ շնորհս .
 զոր օրինակ հուրն ունի զլրութի
 ջերմութեան լն աւարկային , եւ
 դեպ թէ պարունակիցէ յինքեան
 զամ ջերմութի՛ յորմէ այլք լինին
 ջերմ . լիութի շնորհաց ըստ ենթակային
 ասի , յորժամ ընունողն
 շնորհաց թէն ոչ ստացի բովնիկ
 զամ շնորհս , սակայն ունի զամ
 որ պատշաճի իւրում վիճակի , ուն
 մարդ քաջաւոզ զ ունի զլրութի ջերմութեան
 ըստ ենթակային , քանզի
 աւ կատարելայն աւոզ լինելոյ
 նր ոչինչ ջերմութի պակասէ :
 Արդ՝ թէն լի շնորհօք ասին նր

մեր քս՝ ամենօրհնեալ կոյսն՝ և
 սքն ստեփաննոս կի՛ք այլ սք.ք,
 բայց այլև այլ օրինակաւ. զի ուր
 այլ լիութի է առ ուրի, այլ՝ գեաոյ,
 և այլ՝ ծովու, ըստ փոսոյն անձ
 կու՛թեան և ընդարձակուէ. սոյն
 պէս ըստ այլ և այլ առաւելու
 թէ ենթակային՝ այլև այլ է շնոր
 հացն լիութի. քանզի քս է լի շնոր
 հօք հանգոյն ծովու կի՛ք աղբեր՝
 ուր զեզեալ առատացեալ ծովա
 նան հոսանք շնորհաց, և ՚ի նմա
 նէ ՚ի համօրէն մարդիկ եզր ՚ի
 գլխոյ յանդամս սիւեալ հոսեն
 շնորհք. նժամայր կոյսն մարիամ
 իբրև յայն աղբիւր հպաւորագոյն
 գեա՛ լի է շնորհօք՝ որոյ միջնոր
 դուք և աննահանջի լի բարեխօ
 սուք յայլ սուուս հոսեն շնորհացն
 բաշխոյք, թէի՛ր և նուաղ քան
 զըուրս ծովու կի՛ք աղբեր, բայց
 լի հոսանօք. իսկ ստեփաննոս կի՛ք
 այլ սք.ք ասին լի շնորհօք՝ ըստ օրի
 նակի առ ուրաց՝ որք ելանեն ՚ի գե

աոյն . քս լի է շնորհօք՝ լիութի՛ որ
 ըստ առարկայի՛ և որ ըստ կենթա-
 կայի . իսկ ստեփաննոս է այլք ՚ի
 սբց լի շնորհօք՝ լիութի շնորհաց
 ըստ կենթակային այն՝ , բայց յոյժ
 ստորև տարօրինակ ՚ի լիութի շնոր-
 հաց կուսին՝ որոյ անձամայրուէն
 պաշտօն զգերօրինակ լիութի շնոր-
 հաց պահանջէ՛ քան թէ այլ անձ
 դասք սբցն համօրէն : Ա՛յսպիսի ա-
 սեն առ հսրկ անձաբանք լի սբցն
 թովմայի՛ որ ասէ ՚ի ք մասն . ինն՝ .
 ինն . պր՛ . ք . * երանուհի կոյսն մա-
 ըխամ՝ հպաւորապոյն գտաւ քսի լի
 մարդկուէն , զի ՚ի նմանէ էառ
 (քս) զմարդկայինս բնութի . և վս
 այն պարտ իսկ էր նմա առաւել
 քան զայլս զառաւելապոյն ընդու-
 նիլ ՚ի քսէ զլիութի շնորհաց || . և
 ՚ի ինն՝ . է . պր՛ . ժ . առ ան . յայանի
 ցուցանէ՛ թէ կոյսն ստացաւ զլի-
 ութի շնորհաց . վս զի ասէ՛ ունէր
 պայնչաթի շնորհս՝ որք բաւական
 եղին աստուծուստ անբաւնալը

նի յաշտիճանն անժամայրուէ . յղիս
 այսորիկ ասէ նքն կիպրիանոս 'ի
 բանն ծնն" քնի . * վայելէ (կու
 սին) լիուի շնորհաց իբր մօր ,
 աւատուի շնորհաց իբր կուսի) .
 և նքն եփրեմ կոչէ զնա դշտոյ
 ամենեցուն , սիրուհի և իշխան ,
 հրաշտիաւագոյն թագուհի և
 գերազանժ ամենօրհնեալ , դշտոյ
 դշտոյից և թագուհի հրեշտա
 կաց . վնդի լիագոյնս գտան 'ի նմա
 հոյք ամ շնորհաց . հաւատքնա
 հապետաց , հոգի մարգարէիցնա
 խանձայուզուի աւաքելոց , հա
 տատուի վկայից արեամբ նահա
 տակելոց , բեղմնաւորուի ամուս
 նացելոց , մաքրուի հրեշտակաց .
 յորմէ և դամասկացին յորջորջէ
 զնա սրբագոյն քան զնքս : Այա
 կոյսն լի եղև շնորհօք՝ որ ասի
 հաճոյարար , շնորհօք՝ որ ասի
 ճրիական . և այս 'ի մարմին և
 հոգի , զի չունէր ինչ զլուցկիս
 ցանկուէ , որով և մարմինն նի լիով

հնազանդ էր բանին և հողւոյն,
 ուն էր յաղամ'ի դրախտին սկզբը
 նախան արդարութիւնք. և այսինքն
 մեծին օգոստինոսի'ի կոյսն դաշ-
 նաւոր էին ընդ միմեանս բնուի
 և շնորհք, և բնութիւնն ամբիւ
 շնորհացն եղև գործակից:

Ապա կոյսն գտաւ գերազանցել
 յամ' և յիւրախանչիւր աւաքինու-
 թիս' որովք վայել էր նմա զար-
 գարիլ և պատրաստիլ, որ հան-
 դերձեալ էր լինել ամամայր և
 ծնանիլ զամ'ի մարմնի. քանզի
 գրեալ է զնմանէ երգ". Դ. 7.
 * ամենեւին գեղեցին ես մերձա-
 ւոր իմ, և արատ ինչ ոչ գոյ'ի
 քեզ ||. զի զայս բան թէնքն նիւ-
 սացին մեկնէ զյաղթական եկե-
 ղեցւոյ՝ որ յերկինս, և մերս գրի-
 գոր նարեկացի՝ զղինու՛որեալ ե-
 կեղեցւոյ՝ որ յերկրի, բայց այլք
 ընդ սրբն թովմայի զայս խմանան
 զիուսէն միայն. վնց սրբն ակտանաս
 'ի ճառն՝ որ յաղագս ամաճնի, ա-

սէ , * 'ի կոյսն այնպէս էջ հողին
 սբ հանդերձ մմ' իսկական աւա-
 քինութիւն որք գտան 'ի նմա բանիւ
 մծաւարք պեափն , ընկղմեալ զնա
 'ի շնորհս , մինչև յամի լինել նմ'
 շնորհազարդ , և մն այն կոչեցաւ
 լի շնորհօք . իբրզի լրութի հողւոյն
 սբյ զեղաւ մմ' շնորհօք ॥ . և սբն
 երոնիմոս ասէ 'ի բանն' որ յաղագս
 փոխման ամենօրհնեալ կուսին .
 * քաջ իսկ (ասացաւ) լի . զի մմ'
 մասամբք աւաւելեալ գտցի . ա-
 յա ճշմարտիւ զեղաւ 'ի մարիամ'
 բովանդակ լիութի շնորհաց ॥ :
 Արդ' ամենօրհնեալ կոյսն այն ,
 պէս լի եղև շնորհօք , մինչև
 դործակից լինելովն շնորհաց' ար-
 ժանի եղև , զի արագութի և ան-
 լիջատ աճեացեն շնորհք , և ինքն
 լիցի ոչ միայն շնորհօք լի , այլև
 լիագոյն , մնլի թէնլ լի էր շնոր-
 հօք յայնմ աւալին վայրկենի , զի
 ունէր զայնչափ շնորհս' որոց էր
 լուսակ , բայց այնչափ շնորհաց

արագանց և անխտափան եռանդա-
 գին ներգործութիւն գործակից լինե-
 լով, յանձին իւրենէր նոր արժա-
 նաւորութիւն՝ նոր իւրենակութիւն և
 նոր պատրաստութիւն՝ ի սասցուն
 նորանոր շնորհաց, և այն՝ անխա-
 փան և անբնաս, ուն ասացաք :
 «Ի՞ճ՛ Երանուհի կոյսն այնպէս լի-
 էր շնորհօք յառաջին վայրկեանի
 անդ յղուէ իւրոյ, մինչև գրեթէ
 և ոչ իսկ ծագիւն և ծայրիւն չափ
 մերձանալ յայն լիութիւն աստիճա-
 նի շնորհաց գերագոյն հրեշտա-
 կի, այն՝ որ միով կի՛ տրկեակ ներ-
 գործութիւն յանգ եհան զամբ արժա-
 նիս իւր . կոյսն ասեմ՝ ստացաւ
 զարժանիս յառաջնում պահու-
 անդ առաւել ք զարժանիս՝ զորս
 ստանան երկրածինքս համօրէն
 զամբ աւուրս կենաց իւրեանց :
 Աւ արդ՝ կամեցեալ զխորդ յայտ-
 նագոյնս յանդիման կացուցանել՝
 փոքր ի շատէ այսպէս ունիսք ի միտ
 աւնուլ զաստիճան քանիօնուէ

Հնորհաց կուսին լի երկրաշափա-
 կան յառաջատուէ (ուն կոչեն
 երկրաշափաք), քի առե՛նորհնեալ
 սք կոյսն յառաջնում վայրկենի
 անդ սիրելով և վառաւորելով
 զնձ՝ սասական զերազանցեաց ք
 զարժանիս և ք զՀնորհս այնր գե-
 րագոյն հրեշտակի . յերկրորդում
 վայրկենի գործողութե՛ն և սիրոյն
 իւրոյ յաճմանէ անախ լիուէ Հնոր-
 հաց՝ զոր ունէր յառաջին վայր-
 կենի , առախան սիրոյ նք կրկնա-
 պատիկ լեալ՝ և լիուէ Հնորհաց
 նք եղև կրկնապատիկ . յերրոր-
 դում վայրկենի՛նոյն կրկնապատիկ
 Հնորհացն կրկնապատկուք քառա-
 պատիկ եղև լիուէ Հնորհաց նք .
 իսկ՝ ի չորրորդում վայրկենի՛նոյն
 չափ յառաջատուք և կրկնապատ-
 կուք նոյն քառապատիկ առախա-
 նի լիուէ Հնորհաց նք ութնապատիկ
 գործեցաւ . և այնն հեա զհեանէ
 յիւրաքանչիւր վայրկենի սիրոյ և
 գործողութե՛ն անքհատ սասակուք

և միշտ կրկնապատիկ յառաջա-
 տուք բազմացաւ լիութի շնորհաց
 նր ըստ բազմութե վայրկենից եօ-
 լթանասուն և երկու ամաց (լս
 հնրկ կարծեաց) յորոց 'ի լրա-
 նալն կնքեաց զշնորհալի կենաց
 իւրոց զլնթացս բովանդակ , որով
 և յայնչափ գերօրինակ սասակութի
 ժամանեաց աստիճան լիութե շնոր-
 հաց նր , մինչև յայսմ գեր 'ի վե-
 րոյ լինել նմա բզմ առաւելութի
 յամի բան զամ մարդիկ և քան զամ
 հրեշտակս միանգամայն առեալս :
 Հիմնական պատճառ այսր շնոր-
 հական բեղմնաւորութե կուսին՝
 զմիւս այլ բեղմնաւորութե նր լի-
 նել խնանամք այսմ . հաւասար և
 ամբարանութի ուսուցանեն մեզ ,
 թէ հայրն յաւիտենական ունի
 զերիս անձաւելի բեղմնաւորու-
 թիս . զմին՝ կարողութե յարար-
 չութե անդ փեղերացս , զմիւսն՝
 սիրոյ 'ի յառաջածութե հոգւոյն
 սր , և զերրորդն՝ ճանաչողութե

և լուսոյ 'ի յաւիտենական ծնուն
 դեան որդւոյ իւրոյ : Աս ինքն
 զառաջին արգասաւորութեն հա
 ղորդէ որդւոյ և հոգւոյն սբյ՝
 որք անբաժանաբար են մի միայն
 արարիչ և ընդ հօր մի և նոյն
 սկիզբն արարած ոյ : Օ երկրորդն
 հաղորդէ որդւոյն միայն՝ որ միաս
 նական ընդ նմ յառաջ ածէ զսբ
 հոգին միութի սիրոյն . այլ զերդն ոչ
 ումեք յստձային անձանց հաղոր
 դէ . նա ինքն միայն զորդին ծնանի
 արգասաւորութի՛ն՝ որ իւրէ սեպ
 հական, որում և նմանող եղևկոյսն՝
 որ կալաւ զպատիւ յւշ ածելոյ 'ի
 Ժմկի խոնարհութիւ մարդկութե
 զնոյն որդի՛ զոր անԺմկն հայր յւշ
 էած 'ի յաւիտենից ճառագայ
 թիւք փառաց սրբութե . յս քս
 իբրև յաւիտենական բան է յա
 ռաջ ածեալ յստձեղէն բեղմնա
 ւորութե՛ն անտի հօր իւրոյ . և
 իբրև մարմնացեալ բան է յառաջ
 ածել 'ի սքանչելահրաշ բեղմնա ,

և որու թէ մարիամու, կերպասցի է
 'ի նորայն դոյացուէ, ծնէլ 'ի նո-
 րայն որովայնի, սնէլ նորայն կա-
 թամբ, և այնպէ ճշմարիտ նորայն
 որդի. ապա ուր կոյսն յայնմ նմա-
 նական արգասաւորութե գտաւ
 միայնակ, ըստ նմին համեմատուե-
 պահանջի ինքնին, զի և 'ի շնոր-
 հազեղ առատուե լիցի միայնակ :
 Ապա յայնմ ամէ ցայս վայր ասացե-
 լոցս դիւրաւ ունիս 'ի միտ առնուլ
 թէ ամենասք կոյսն ինքնին միայ-
 նակ առաւել հաճոյ է յաչս ւնյ,
 քան թէ այլ ամ մարդիկ և հրեշ-
 տակք միանգամայն առեալք. և
 ամ առաւել սիրէ զնա ք զբովան-
 դակ զինուորեալ և զյաղթական
 եկեղեցիս երկրածնաց և աննիւ-
 թից. զորմէ այլ ևս չկարեմք և
 չկամիմք յերկարել զբանս. ցան-
 կացողն երկարագունիցն մակացու-
 լինել ճառից՝ որ զիուէ շնորհաց
 կուսին, զիմաստուն վարդապե-
 տացն ընթերցցի զբանս, որք խո-

րագոյնս իմաստասիրեցին յաղագս
 այսր նիւթոյ: Քայց զբան հրեշ-
 տակին կամեցեալ 'ի մեզ մօտել
 լն յաւաջադիր բնաբանի ողջու-
 նիս՝ կարեմք բարբառել առ կոյնն
 ասելով՝ լի շնորհօք, եբր թէ՛
 կոյսգ բարեբանեալ յիշեան զօրն և
 զժամն զայն՝ յորում լցեալ լիացար
 անձառելի զեզմամբ շնորհաց, և
 այննց մասնաւորեան և մեզ յան-
 պատում լիուէ անտի շնորհաց քոց
 շիթ մի, որով պայծառազար-
 դեալ զկեանս մեր՝ հուսկ ուրեմն
 արժանի լիցուք զաւ 'ի քէն լն-
 կալեալ շնորհաց մերոց զքաղց-
 րորակ պատուս ճաշակել, դէմ
 յանդիման անտանելով զամենա-
 հրաշ գեղ երեսաց քոց և զսծա-
 փայլ դէմն ածորդւոյդ միածնի
 քո մն մերոյ յսի քսի յանվախձան
 'ի կեանս՝ յոր միայն դիմէ փա-
 փաք հոգւոցս:

7. Արդ՝ իբրև ցուցաւ լիուէ շնոր-
 հաց կուսին, այժմ 'ի մէջ բերի

արարիչ շնորհաց և ամ' հոգևոր
 լուսն գանձուց նր' . վնյ յարի' ար
 ընդ քեզ . աստէն զօրուի իմա
 ցեալ ինի առաւել բայս' է , քան
 թէ' լիցի , զի տայ զպատճառ ի
 նելոյ նր լի շնորհօք . եբր զի ար
 է ը նմա , և առ ընթեր կայ նմա ,
 և իսկ և իսկ է ընդ նի' առան
 ձին եղանակաւ , ոն զի գործեսցէ
 'ի նի' գառանձին գործ մարդե
 ղուէ բանին . վնյ սբն օգոտախոս
 ասէ 'ի բանն ժը . յաղագս սբց .
 * ար ը քեզ 'ի միտս , ը քեզ 'ի
 նոյաստս , ը քեզ յորովայնի || :

Եւ արդ' շէն ինչ զարմանք , եթէ
 կոյսն լի էր շնորհօք , ընդ որում
 էր արն շնորհաց . բայց ը սբն
 բեռնարդեայ արժանի զարմա
 նալոյ այս է , զի որ հրեշտակ ա
 ռաքէր առ կոյսն , զիարդ վաղ
 վաղակի 'ի հրեշտակէն գտաւ լի
 նել ընդ կուսին . ասաքէն սբան
 չելեք են իբքս , զի ամ երագա
 զոյն գտաւ ք զհրեշտակն . վնյի

յառաջագոյն ք զճեպել պատգա-
 մատար զուարթնոյն՝ ինքն իսկ ան-
 դէն եհաս յերկիր . այլ չեն ինչ
 զարմանք , քանզի մինչդեռ զար-
 քայն 'ի գիրկս իւր ընկալաւ , նար-
 դոս կուսին բուրեաց զհոտ , և
 բուրումն կնդրկի նր ել առաջի
 փառաց նր , և եղիտ շնորհս ա-
 ռաջի աչաց ան և յանդիման նց՝
 որք աղաղակէին , ով է սա՛ որ
 ելանէ յանապատէ իբրև ստեղն
 ծխոյ խնկեալ՝ զմուռս և կնդրուկ :
 Արդ՝ թէպէ և ան է յամ իրս ա-
 ռաջակայու թէ գոյու թէ և կարո-
 դու թէ , բայց 'ի բանաւորս յաւե-
 լեալ ի՛նք եղանակաւ , այն է՝
 ճանաչմամբ , և 'ի բարիս՝ նաև
 սիրով , ընդ նմին և միաճայնութե-
 կամաց՝ որով յինքեանս յարեն
 զանձ , և այսպէ յամ սբս է ան .
 իսկ ընդ մարիամ է յոյժ առան-
 ճին օրինակաւ . քանզի այնչափ
 եղև 'ի նմ միաբանութի ընդ ոյ ,
 մինչև ոչ միայն զկամս նր , այլև

զմարմինս անդամ ընդ իւր լծոր
 դել, և ունի թէ յիւր անձային և
 ՚ի կուսինս գոյացուէ արար մի քս,
 կիմ մուշտ եղև մի քս՝ որ թէնի
 ոչ ըստ բոլորին յոյ է, և ոչ ըստ
 բոլորին ՚ի կուսէ, սակայն բո
 լորն է ոյ, և բոլորն կուսի. զն
 ոչ երկու որդիք, այլ մի միայն
 որդի երկոցունց. ապա ընդ կու
 սին եղև տր՝ բովանդակ ամենայն
 երրորդուի. յայս միտ իմաստ
 բնաբանիս է, ոչ միայն տր որդին
 միածին՝ որում մարմինս զգեցու
 ցանես, է ընդ քեզ, այլև տր տր
 հոգին՝ յորմէ գտանիս յղացեալ,
 է ընդ քեզ, նաև տր հայր ամե
 նակալ՝ որ զորդի իւր՝ աւնէ և
 քո, է ընդ քեզ. և ևս՝ հայր՝
 որ անժամանակաբար ծնանի զիւր
 որդին՝ զոր դու ժմկւ յղանաս,
 է ընդ քեզ. որդին՝ որ առ ՚ի
 գործել ՚ի քեզ զմեծահրաշխարհ
 գերօրինակ ցուցանէ, քեզ զգաղա
 նիս ծննդեան իւրոյ ՚ի ժմկի, և

առ քեզ պահէ զկնիք գերամա-
 քուր կուսուէ քո, ընդ քեզ է. և
 ամենասք հոգին՝ որ հօր և ընդ
 որդւոյ մաքրագարդեալ տեղի յար-
 դարէ՛ ՚ի քում որովայնի, ը քեզ
 է. և այսոյ բովանդակ երրորդու-
 թիւն անձաուելի օրինակաւ ը քեզ
 է. որով և յիրաւի կոչիս արժա-
 նաւոր տաճար երկրպագելի եր-
 րորդուէ: Ապա գովեստ որդւոյն
 է գովեստ մօրն, փառք որդւոյն
 փառք մօրն. զի այնոյ սերտ սի-
 բեցին զմիւսանս, ուն թէ երկո-
 ցունց եղև մի սերտ մի ակորժակ
 և մի կամք, որով և մի միայն
 արուէ. վսկ իբրև դշխոյ ամի
 կոյն տիրէ յերկինս՝ յ՛ճի՛ ՚ի քա-
 լարանի և ՚ի դժոխս. և նա է իբր
 տաճար սողովոնի՝ ուր ճեմս առել
 բնակէ հանգչի և նստի բարձրեալ
 և ճշմարիտն սողովոն՝ որ արար
 խաղաղուէ ընդ ամ և ընդ մար-
 գիկ. ՚ի նմ՝ ամենամեծն ամ եղև
 մանուկ փոքրիկ. նովաւ հին ա-

Լուրջ փրն զտաւ որդի նորահաս .
 'ի նմանէ բանն անժմկ և արար-
 չապեան անտես մարմնոյ աչաց՝
 ցուցաւ տեսանելի արարած ըստ
 մարմնոյ . բայց և ոչ իսկ այնպէս
 ճիշդ համեմատի ը սողամոնեան
 տաճարի՝ որ տպաքէն սկզբնաւո-
 բեայն է . իսկ կոյսն է մայր ան-
 սկզբնականին և անվախճանին .
 զի նոյն որդի կուսին զոլով որդի
 օյ՝ է քհնյսլա և թիւր թիւրց ,
 որ և 'ի սբ յայնմ կուսական տա-
 ճարի զգեստաւորեցաւ քհնյական
 պատմութեանօք հոգևորաօյ՝ որովք
 մատոյց ոյմորգ . Տակեցոյց , և այնպէս
 ախորժ բերկրանօք իբրև 'ի տա-
 դաւարի հանգեաւ 'ի նմ օր , այն
 է՝ էջ յարգանդ նր տունուլ 'ի
 նմանէ մարմին իսկական , եղև
 'ի հոգի նր լիութիւն շնորհաց ևն ,
 ոյն 'ի վերոյ լիով ասացաք :

Աւասիկ այս է ասելն՝ օր ընդ
 քեզ , դրեթէ հանգոյն սմին ա-
 սաց օր ցյեսու 'ի սլէ . * ոյն էի

ընդ մովսեսի, նոյնպէս եղէց և ը
 քեզ ॥. և հրեշտակն ցգեպէնովս
 'ի դասս" Գ. 12. * Խոր ը քեզ հզօր
 զօրութի ॥. Գ. 12. * Խոր ը քեզ հզօր
 ասէ, * Խոր ը քեզ եմ" և ցպօղոս
 'ի դործ". Ժբ. 10. * Խոր ը քեզ եմ" ॥.
 սակայն առ մարիամ այնչափ գե
 րազանցագոյն օրինակաւ ասացաւ
 բանդ՝ Խոր ը քեզ, որչափ գե
 րամբարձ ճնաշխարհիկ և Խոր
 հրաշխարհդ կատարեցաւ 'ի նմա:
 Իսկ Խոր ը քեզ մասն. ին.
 Եւ պր. Գ. զայս բան Խոր ը քեզ
 մեկնէ 'ի վր Խորունական յղուե և
 մարդեղուե բանին. այլ զայս
 պարտ է իմանալ ը 'ի մօտոյ կա
 տարելի, և ոչ կատարեալ լինելոյ:
 Աւ ը մերումս վիճակի 'ի պա
 զատիկ մերում առ կոյսն սովին
 ողջունի կարեմք մաղթել յայս
 միտ. Խոր ը քեզ կոյսդ ամբիծ,
 յուշ ածել ազաչեմք զժամն, յո
 րում եղև ամենամորն ընդ քեզ
 լրութի շնորհաց և իսկանց մարմնա

ւորուք նորագոյն տիեզերաց և
 անմարմին անեղ բնութիւն . և այժմ
 է ընդ քեզ լիութիւն յաւիտենական
 փառաց և ակնյանդխման տեսութիւն
 միածնի քո յնի , որով միշտ զմայ-
 լիս յանձառ ուրակութիւն արքա-
 յուն երկնից , մաղթեալ մն մեր
 յորդույքումիւն , զի լիցի ընդ մեզ
 աստ շնորհօք , և մաւնդ իրական
 առաջակայութիւն յարժանանց հա-
 զորդիլ մերում անարատ մարմնոց
 և անապական արեան նք , ուն զի
 և անդ լիցի ընդ մեզ քե հան-
 դերձ անձառ փառօք :

Յ. Արդ յեա ՚ի մեջ բերելոյ զը-
 ուարթեայն զլիութիւն շնորհց կուսին
 և զընաւորանց ինքնաբուզիս ազ-
 բիւր այնր լիութե զմծ , այժմ
 յայտնի ցուցանէ զնեղործութիւն
 ընդ նախ և զգերամբարձ
 գովեստ գերահարաշ կուսին ասե-
 լով օրհնեալ ես դու ՚ի կանայս :
 Այս բնաբան գտանի յմծ թարգ-
 մանութիւն ևս և ՚ի յունականն

որ մէ մերս թարգմանեցաւ . և
միայն 'ի մերումս ոչ գոյ 'ի զուկ' .
մ. 28. այլ թէ զխորդ լեալ իցէ
այդ պակասութի , ստոյգն չէ յայտ ,
հաւանականաց մարթ է ասել
թէ կամ առ թարգմանիչս մեր
կայր այլ յունական բնագիր օտար
յարդի օրինակաց , և կի՛ այս բնա-
բան անկեալ է յանզգուշուէ հետ
զհետէ գրագրաց . ուն և իցէ , այս
բան ողջոյն գտանի 'ի թարգմանութե
մերում այլուր 'ի զուկ' մ. 42.
ասացեալ 'ի բերանոյ եղիտաբեթի
առ մարիամ , ուն և 'ի համարն 28.
գէթ զօրուք պարտի լինել ասա-
ցեալ 'ի բերանոյ հրեշտակին առ
նոյն կոյսն : Այոյն բան ասացել է
և առ յայել ' որ սպան զսխարա 'ի
դատ' . ե. 24. և առ յուգիթ' որ
սպան զհողեիեռնէս . բայց սա-
կայն յոյժ գերօրինակ եղանակաւ
ասացաւ այս առ ամենօրհնեալ
կոյսն' որ բիւրապատիկ ևս օրհ-
նութիք պարգևօք և շնորհօք

գտաւ զերազանցելէ՛ք քան զյայէլ
 քան զյուզիթ և քան զայլ նմ' կու
 տանս և զտիկնայս . և ունի թէ ա
 սացելէ՛ էր , դու միայն շնորհալնց
 մարիամ՝ քան զբովանդակ ազգ
 կանանց և քան զիւրաքանչիւր և
 քան զնմ' կանայս առանձին օրի
 նակաւ օրհնեալ ես . քանզի ունի
 կոյս ես , նոյնն լիցիս և մայր .
 և ունի առանց ցանկուէ՛ յղասցես ,
 նոյնն և առանց ցաւոց ծնցես
 զմիածին որդին նոյ . քանզի այլ
 կանայք յեանորդք եւայի ցանկուէ՛
 յղանան . և ցաւովք ծնանին թշուա
 ռալիւր զաւակս , և կամեն գլխո
 վին ամուլ : | ուր նոյն օգոստի
 նոսի՝ որ 'ի բանն ժր . յիլգս նոյ .
 գեղեցիկս բարբառի առ կոյսն ա
 սելով՝ * օրհնեալ ես դու 'ի կա
 նայս , որ արանց և կանանց ծնար
 զկեանս , մայր միկայինս սեռի
 երէր պատիժս , մայր նոյն մերոյ
 էաճ յճս փրկութի . եւայ գտիչ
 մեղաց , մարիամ պարգևիչ շնոր

հաց, եւ այ սպունանել լովն փաստեաց,
 եւ մարիամ կենդանացուցանել լովն
 օգտեաց. նա եհար, եւ սա բժշկ
 կեաց. զի ընդ անհնազանդութե
 հնազանդութի փոխաբերի, եւ հա
 ւատք լանհաւատութի փոխարինի:
Մ. ստէն հրեշտակն ողջունէ եւ
 դրուատէ զամենօրհնեաց կոյսն
 գրեթէ նոյնօրինակ գովեստաբ
 եւ պերճաբանութք՝ որովք ողջու
 նեաց գովեաց հանդերձ ամ ժո
 ղովողեամբ յովակիմ քննյ զյու
 դիթ՝ որ յոգի եհար զհոյեփեա
 նէս, * զնւ բարձրութի եհմի, զնւ
 ցնծութի իհլի, զնւ պարճանք ազ
 գիս մերոյ, զնւ արարեր զայս ամ
 բարութն ձեռօք քովք իհլի. եւ
 հաճեցաւ լն նս ամ. եւ օրհնեաց
 եղիջիր դու յամենակալէն այ
 մինչև յաւիտեան ||. 'ի յուդիթ.
 ԺԵ. 10. եւ 11: **Մ.** յիրաւի է ա
 մենօրհնել, զի է բարձրագոյն ք
 գերկնայինն, հզօրագոյն ք գերկ
 բայինս. եւ լայնածաւալ ք զտի

եղերս . վնդի նա միայն տարա-
 յինքեանս զամ՝ որում Տս չէ՛ բա-
 ւական , կրեաց զնա՝ որ կրէ զամ՝
 բանի՛ն զօրուէ իւրոյ . ծնաւ զծը-
 նոցն իւր . կերակրեաց զկերակ-
 րիչն իմ՝ կենդանեաց . կոյսն եղև
 օրհնուի , որ ՚ի հնումն առ նա
 հապեամն պարարտուի՞ օրինա-
 կեալ՝ թէ երկիր մեր ետ զպտուղ
 իւր . ճշմարտի՛ն է ամենօրհնեալ
 կոյսն՝ զոր եղև կիտէլ արևելք առ
 ճայնեաց . օրհնեալ է կոյսն՝ զոր
 դանիտէլ այրն այն ցանկալի՝ ետես
 լեաուն մեծ , և սքանչեքստեան զա-
 քարիսս՝ եօթնաշահեան աշտա-
 նակ ոսկւոյ , ցուցանելով զնա լի-
 նել զարդարեալ եօթնարիեան
 պարզեօք հողւոյն նրայ . վնկ ա-
 սելն՝ օրհնեալ ՚ի կանայս , ցու-
 ցանէ՛ թէ որ ինչ միանգամ է ա-
 մենաբարի , օղջոյն գտաւ ՚ի կոյսն
 ամենօրհնեալ , հայելով յերբեակ
 մի՛ճակ կանանց , ըստ որոյ կոյսն
 եղև օրհնեալ և ամենօրհնեալ ՚ի

կանայս կի՛ք քան զի՛մ՝ կանայս , իբր
 զի բովանդակ ազգ կանանց յի-
 թիս դասս արոհին . զի կամ են
 կոյս , կամ այրի , և կամ ամուս-
 նացեալ . կուսանք գովին յամ-
 բողջուէ մասին , բայց ո՛չ նոյնա՞յ
 ՚ի ծննդեան . այլիք յարգին արի-
 ուք հողւոյ , այլ միայնուք ո՛չ ևս .
 զի գրեալ է ՚ի ժող՞ . Դ . 10 . * վա՛յ
 միոյն , եթէ՛ գլորեացի , ո՛չ գուցէ՛
 միւս՝ որ յարուցանիցէ զնա ॥ . և
 ամուսնացեալք սրատէին որդե՛ծ-
 նուք , իսկ կուսական անարատուք
 ո՛չ բնաւ . սակայն յի՛մ կանանց մի-
 ջի միայն ամենօրհնեալ կուսին
 յամբաւազօր յամենաուատ յամե-
 նակալէն սարգևեցան այս շնորհք՝
 զամբիծ կուսուին ընդ հրաշալի
 որդե՛ծնուէն միաբանել , զարիուի
 սրտի ընդ սքանչելի ընկերուէ
 լծորդել , զի իսկապէ՛ հարսնացաւ
 ընդ արդարոյն յովտե՛փայ , թէ՛սպ
 աւանց ի՛մ գործակցուէ՛ որ չէ՛
 յէուէ՛ ամուսնուէ , և որ հրաշա-

փառադոյնն է քան զամ, մայրու-
 թիւն 'ի կուսուէ ոչ անկաւ, զի
 ամենօրհնեալ կոյսն բռնաբարեալ
 քակեաց զհասարակաց օրէնս բը-
 նուէ. մտի ուր այլք կամ մայր
 միայն լինին, և ոչ կոյս, և կամ
 կոյս միայն, և ոչ մայր. միայն
 մարիամ 'ի մի զօղեաց զկուսուի
 և զմայրուի. քանզի իսկայն է
 մայր և կոյս, և ոչ միայն եղև
 մայր 'ի մայրութեան, բայց նաև
 մայր 'ի կուսուէ. և ոչ միայն կոյս
 'ի կուսուէ, այլև կոյս 'ի մայրուէ:
 Այր ոյր ուրուք 'ի մահկանա-
 ցուաց որչափ և նրբահայեաց
 միաք ըմբռնել զօրեացէ զկուսու-
 թի 'ի մայրուէ և զմայրուի 'ի
 կուսուէ, աղաքէն 'ի յաւիտենից
 սչոք լուաւ զայս կ' լուիցէ, զի
 որ կոյս է, մայր ոչ ևս, և որ
 մայր է՝ կոյս ոչ ևս. զոր օրինակ
 որ ինչ լուսաւոր է, չէ՛ խաւա-
 րին, և որ ինչ խաւարին՝ չէ՛ լու-
 սաւոր, սակայն ոմ մարիամ միայն

'ի մի միաբանեաց զկուսուելի և
 զմայրուելի, նոյնպէս և զսոցին տի-
 բանպէս զառաքինուելի և զգովեաս
 միանգամայն յանձն գրուեաց խըմ-
 բովին. վնկ յիրաւի 'ի հրեշտա-
 կէն ձայնեցաւ և գովեցաւ օր-
 հնեալ 'ի կանայս, նաև յեղիսա-
 բելթէ հրաշացաւ օրհնեալ 'ի կա-
 նայս. և ահա 'ի նմ ճշգրտի ա-
 ռածն ճշմարիտ թէ բաժանեալքն
 'ի ստորինս՝ են միաւորեալ 'ի վե-
 բինս. զի ուր յայլ ամ երբեակ
 սեռս կանանց մի միայն ձիրք գտա-
 նի, և 'ի վարձ նորուն մի միայն
 առաքինուելի, կամ կուսուելի աւան-
 ձին, կամ ամուսնուելի աւանձին,
 կամ այրիուելի աւանձին, որք հար-
 կին բաժանաբար գտանին՝ մին
 'ի միում, և միւսն 'ի միուսում.
 զի ստացիչք սոցին են ստորին.
 Իսկ 'ի կոյսն ամենօրհնեալ ամն
 միանգամայն խմբեցան՝ ձիրք և
 առաքինուելք նոցին. զի ստացիչն
 է մարիամ վերինն և գերագոյնն

քան զամ' կանայս . զոր օրինակ' ՚ի
 միապետ թիւրն' որ գերագոյնն
 է քան զամենեւին յերում թիւո-
 բուէ , զսանին միագամայն ամ'
 իշխանութի' որք ՚ի ստորին պաշ-
 տօնատեարս բաժանաբար միայն
 գտանին . և օրինակ իմն' եթէ Զար-
 տար արուէտատուոր որ' ուն ժա-
 մագործ' հնարեացէ պէսպէս ժա-
 մացոյցս այլ և այլ կատարելուէց
 ունակս կ'երևեցուցիչս . և ապա
 ՚ի յանդիման աւնել զվսեմութի'
 հմուտէ իւրոյ գործեացէ զայլ
 ժամացոյց մի' յորում իցեն հա-
 մանգամայն ամ' կատարելութի' որ
 էին յայլս ամ' աւանձինն . իս այսմ'
 ճարտարաւեսան ամ' յօրինեաց ըզ-
 կոյնն համօրէն օրհնութի' միան-
 գամայն լիացեալ' քան զոր վէհա-
 գոյն անհնարաւոր է լինել , զի
 թէ մարմին աւնոյր այլ անձն ,
 մայր նր' ոչինչ աւելի լինէր քան
 զմարիամ . այս է գովեալ հրեշ-
 ատակին' զոր ետ կուսին , և այս է

ասեւն՝ օրհնեալ ես դու 'ի կանայս :
 9. Արդ՝ յիս այսորիկ 'ի մէջ բի-
 բի տիրանալ պիտի այնպիսի գո-
 վեստից կուսին , և ասի՝ և օրհ-
 նեալ է պտուղ որովայնի քո յս .
 այս է բան եղիսաբեթի , զոր ե-
 կեղեցի քաջայարմար պատշաճա-
 ւորուի յարեաց ընդ նախընթաց
 բանս հրեշտակին . մի՛ զի զնոյն
 բան՝ զոր ասաց հրեշտակն , ասաց
 և եղիսաբեթ , և այն է՝ օրհ-
 նեալ ես դու 'ի կանայս , ունի 'ի
 վերոյ յայտ արարաք . և երկի՛
 զի ամբողջացի բան ողջունիս ,
 որով և բովանդակեսցի գովեստ
 կուսին , միանգամայն 'ի հրեշ-
 տակային և 'ի մարդկային բանէ
 հոգւով ազդելոյ անշուշտ աւետալ
 զհաստատուելի վկայուեն :

Այց ծանիր , զի 'ի սբ գիրս յո-
 լով ուրեք 'ի գործ ածի ևն իո-
 խանակ բառիս՝ քանզի . ունի 'ի
 դուկ՝ . իբ. 43. * և էր 'ի տագ-
 նապի || . Կր՝ քանզի . զի աւետա-

բանին զպիճա զօրացուցանելոյ
 հրեշտակին զքս՝ ՚ի մէջ բերէ .
 վնդի հրեշտակն յայն սակս զօ-
 րացուցանէր զքս , քան զի քս էր
 ՚ի տաղնարի . վնկ աստէն բառս
 և , դնի փոխանակ բառիս քղի .
 զի ցուցանէ զպիճա օրհնեալ
 լինելոյ կուսին ՚ի կանայս . ուր թէ
 ասացել էր , վն այն օրհնեալ ես
 դու ՚ի կանայս , քանզի օրհնեալ
 է պառզ որովայնի քո , այն է
 որդի ւնյ՝ զոր վազվազակի յղացար
 անձառաբար , և ՚ի քեզ մարմին
 զգեցուցեր նմ վայելչամբ . այսր
 աղաղաւ և դու օրհնեալ ես .
 վնզի աղբիւր նմ օրհնուէց և
 շնորհաց կուսին՝ որք նմ յնյ ա-
 ռատաճեանեցան , է նմամայրու
 թի նր՝ որով յղացաւ զնմ , և
 վնա յինքեան մարմնացոյց . քղի
 նմ վնայնորիկ զմայր իւր նմ շնոր-
 հացն վայելչութե շքեղազարդ եաց ,
 զի արժանի արասցէ վնա լինել
 իւր վայելչաշուք բնակարան կմ

մանադ ճշմարիտ մայր սիրապա-
տար . զի զն՝ այլ ոք՝ քան թէ
զմայր իւր իմ՝ օրհնութիւն լիացու-
ցէ որդին , և այնպիսի որդի՝ որ
համանդամայն իմ է և մի :

Յայսմանէ յայտ է՝ թէ աստա-
նոր եղիսաբեթ ՚ի հոգւոյն սբյ
ազդեալ՝ զամենօրհնեալ կոյսն
ծաննեալ յղացեալ զբանն իմ , և
անտի ՚ի միա էաւ անդէն զիմա-
մօրն զանձառելի զմեծարոյութի և
զարժանագով զյարգութի , զոր ոչ
այլով իւրք մարթացաւ յայանել ,
բայց եթէ ասելով , օրհնեալ է
պտուղքո , ույ թէ ասէր՝ ոչ միայն
օրհնեալ է նա ույ զքեզ թ զիմ
կանայս , այլ և օրհնեալ է արձա-
կաբար քան զիմ՝ հրեշտակս քան
զիմ՝ մարդիկ և քան զիմ՝ արարա-
ծական բնութիս . այն զի այլ իմ
որդիք եւայի են անիծեալ . քան զի
յեւայէ և յազամայ ձգեն զսկըզ-
բնական մեզս . միայն յս քս որ-
դին մարիամու է օրհնեալ տի-

րանց , զի ոչ է աղամայ որդի
 քնական , այլ գերքնական 'ի կու-
 սական որովայնի յղացեալ 'ի հոգ-
 ւոյն սբյ : Իսկ ասելն՝ պտուղ ո-
 թովայնի քո , ակնարկէ յայն գու-
 շակուհի և 'ի խոստումն ից եղեալ
 առ դաւիթ 'ի սագ" . Ճլմ . 9 . * 'ի
 պաղոյ որովայնէ քումմէ նստուցից
 յաթու քո || . ուն թէ ասէր , օրհ-
 նեայ լեցի որդի դաւիթի , իմ է՝
 մեծիայ իբր դաւիթի խոստացեալ
 որդի՝ որ է պտուղ որովայնի քո ,
 իբր թէ յորովայնի քում 'ի գե-
 րամաքուր արեանէ քումմէ կեր-
 պաւորեալ և մարմնացեալ :

Արդ՝ թէն իսկաքանչ ճշմարտութե
 յն եղև պտուղ մաքրական որո-
 վայնի մաքրասիրին մարիամու ,
 բայց է և պտուղ մեր միջնոր-
 դութն նոյն կուսին , կամ յորժամ
 արժանանայ ճաշակեմք զմարմին
 միածնի նր 'ի սբ խրհչն հաղոր-
 դուհի , և կամ յորժամ սրբարար
 շնորհօք լեռնիւք զնա 'ի հոգի

մեր . զի զոր օրինակ 'ի հնունս
 էջ բովանդակ ցօղն 'ի վր գղա-
 թուն և 'ի վր երկրի՝ ըստ խնդրը-
 աւածոյն գեղէ ովսի յայ , նոյնպէ և
 ցօղն անապականութե քս էջ բո-
 վանդակ 'ի կոյնն՝ որ է գեղմն
 անապակոն . զի 'ի նմա միայն որ
 մեծատունն էր՝ աղքատացաւ , որ
 փարթամն էր՝ ունայնացաւ , որ
 գերամբարձն էր՝ խոնարհեցաւ ,
 որ անպայմանն էր , չախաւորե-
 ցաւ , և 'ի վայր քան զհրեշտակս
 նուաստացաւ , բայց և յիւրմէ գե-
 րազանցութե երբէք ոչ անկաւ .
 այս է պտուղ կուսին , որ և է մեր
 պտուղ բոլորովին . զի մեք ամե-
 նեքին նր աղքատութեն մեծացաք ,
 և ճոխացաք , նր խոնարհութեամբն
 բարձրացաք , նր նուաստութե պեր-
 ճացաք , նր մարմնաւորութեն յած-
 անդր յարեցաք , և նորայն շնոր-
 հօք սկսաք լինել մի հօգի ընդ
 նմա . և այնպէ բովանդակ եղև մեր
 պտուղ՝ զոր աստ ճաշակեմք հո

գեւոր շնորհօք, և անդ 'ի հան-
 դերձեալն ճաշակեալ անմահա-
 նամք անպատում փառօք՝ որ այն
 ինքն է անմահական կեանք. և
 ահա 'ի սոյնպիսի օրհնեալ պտուղ
 օրհնելոյն մարիամու արկնարկեալ
 մանկունք եկեղեցւոյ՝ գովէն ըզ-
 կոյսն ասելով՝ * համեղածաշակ
 պտղոյն բանաւոր բարունակ՝ յորմէ
 կթեցաւ մեզ ողկոյզն անապառ-
 յուրախուի արամեցելոց 'ի ճա-
 շակմանէ ծառոյն գիտուե. սրբ-
 բուհի անարատ՝ ամենեքեան՝ ըզ-
 քեզ մեծացուցանեմք ॥ . * ծառ
 կենաց անկեալ յադին սբ կոյս՝
 որ զհայրածինն բղիտեցեր զծաղիկ,
 որ ետուր 'ի ժամու զորդին պը-
 տուղ մարդկան, զորոյ զմարմինն
 ճաշակեալ՝ անմահացսք յուսով.
 վնյ օրհնաբանեմք զքեզ ॥ ևն:
 Յայսմ բնաբանի բառդ՝ յս, չէ
 'ի բնադրէ սբ գրոց, այլ յաւելեալ
 է զայս սբ եկեղեցին, ըստ որում
 զօրուի է իմանալի 'ի բնաբանի

անդ աւետարանին. և զայս ծա-
 նուցեալ՝ յայտ է ըստ վերնագոյն
 ասացելոցս, թէ մինչև ցասա են
 բանք բարեւոյր աւետեաց հրեշ-
 տակին և հողելից եղիսաբեթի
 ըստ մասին մուծեալք յողջոյնս
 յայս. ապա հեաադայ բանքս մինչև
 ՚ի վերջն են կարդեալ յեկեղեց-
 ւոյն ՚ի պաղատանս աւ կոյսն:

10. Արբուհի մարտիամ. սրբուհի
 յաւէտ ըստ երկից նկատի. ըստ
 սկզբան՝ ըստ վախճանի և լնսեր-
 գործուե. լն սկզբան է սրբուհին,
 յորժամ ամ գսկզբնական սրբուհի
 հեղու ՚ի հողի ուրուք, ուղ եղև
 յադամ ՚ի դրախտին. քան զի ասի
 ՚ի ճնն՝ ք. 25. * էին երկուքեանն
 մերկ՝ ադամ և կինն իւր, և ոչ
 ամաչէին ||. յորմէ յայանի երևի
 թէ քանի՞ անարատ սրբուհի ողջա-
 խոհուե էր յայնժամ ՚ի նս՝ որք
 և ամենեկին մերկանդամ կալով
 երբէք ոչ պատկառէին յիբերաց:
 Ըստ վախճանի սրբուհի է, յորժամ

կամեցեալ ընդ կարգել զոր 'ի գե-
րամբարձ պաշտօն իւր՝ սրբէ զնա
ամբժուիք հոգւոյ և մարմնոյ . իմ
այսմ՝ ասէ ինձ զքննից 'ի զև" .
իբ. 33. * Ես եմ՝ ինձ՝ որ սրբեմ՝
զձեզ ॥ . զի որովհետև առաւել
հպաւոր են յինձ յաղբիւրն սրբուէ,
պարտին հրեշտակային սրբուի
զգեհուլ , և զմարմին և զմիտան
անարատ պահելով յինձ՝ առփա-
կան ցանկուէց :

Իստ ներգործութե՛ս սրբուին է ,
որով որ նպաստաւորեալ յինձային
շնորհաց՝ իւրով գործակցուիք յան-
ձին ստանայ կամ զառ հնրկ անա-
րատուի յինձ՝ ազատյ մեզաց , կամ
զառանձին զգեղեցիկ ողջախոհու-
թե՛ն հանդէս՝ որով արիանայ 'ի
վր՝ մարմնոյ և արեան և ինձ՝ ցան-
կուէց կենցաղասէր բազմանաց .
և ասա զայս ինձ՝ երբեակ ազգս
սրբուէ բովանդակ փակէ յին-
քեան բառս՝ սրբուհի , որ առա-
ւել քան այլոց ինձի բազում ա-

և աւելլու թի՛ք պատշաճի կուսին .
 քանզի նախ՝ ունայլուր յայտ արա-
 րաք , թէնայ մարմինն նր ստակ՝ էր
 ներքոյ անկեալ պէսպէս պակա-
 սուեց սահեալ բնութիւնս . զի էր
 սերեալ ՚ի մարմնոյ անկելոյն ա-
 դամայ , այլ բանական հոգի նր
 զարդարեալ էր սրբութիւն հանգոյն
 նախաստեղծին յանմեղունն վի-
 ճակի , և այննայ էր անվթար մա-
 քուր , մինչև ոչ գոյին ՚ի նմա ոչ
 սկզբնական մեղք , ոչ անսանձ
 կրկց յարձակուրդ , ոչ լուցկիք
 ցանկուն և ոչ այլ զինչ և իցէ
 խափանարարք բանաւոր ուղղուն .
 այլ սմ ինչ ընդ ձեռամբ բանի
 նր հպատակ . և թէնայ զայս կար-
 ծիս՝ թէ ամենօրհնեալ կոյն չու-
 նէր զսկզբնական մեղս , ոմանք ՚ի
 վարդապետաց ոչ կալան հաւատ-
 ախ , բայց այժմաւ հասարակ յու-
 գունք յաւաւել քաջխմաստ վրայց
 և սբց հարց և համօրէն սբ ե-
 կեղեցի իբր անշուշտ ընկալեալ

ունին , և հատաստեն զայս յայնի
 վկայութիւն երևելի սբց վդարց ե-
 կեղեցւոյ , ուղ սբյն օգոստինոսի
 և հաւաստի բանիւք սբյն թով-
 մայի և այլոց : Արկրորդ՝ ք զա-
 մենեցուն գերօրինակ էր աստի-
 ճան սրբուէ կուսին . զի բնարե-
 ցաւ՝ի գերամբարձ աստիճան ամ-
 ամայրութի՝ որ գերագոյնն է քան
 զամ սլաշոօն կրօնիս քրիստոնէ-
 ուէ՝ որ ըստ ինքեան պահանջէ
 զամ սրբուէ պայմանս հանդերձ
 լրութի շնորհաց և յոգնատառիկ
 գերբնական պարգևաց . վսղի հիմն
 և բովանդակ սկիզբն սրբուէ մե-
 րոյ է բանն մարմնացեալ կմ քս՝
 որ հարկիւ պարագրէ յինքեան
 զամ ամայր կոյնն՝ առանց որոյ ոչ
 մարմնանայր բանն . վսյ նախա-
 աւջին մօր բանին պատշաճէր սրբ-
 բուի , զի և ՚ի մեզ իջանէր այն
 միջնորդութի կուսին ՚ի քսէ՝ որ է
 սրբուի սրբոց . յայս միտ առեալ
 լինի այն բան շարականի ՚ի կանոնն

յովակիմայ և աննայի, * անժմկ ծո-
 ցոյ ծնունդ հօր էական՝ այսօր
 սրբեցեր յորովայնէ ժմկ մայր 'ի
 մօրէ անճառ մարդեղուք ॥ . Կ
 է՝ անժմկ բանդ անժ՝ 'ի ժմկի
 զսկզբնական սրբուի հեղեր 'ե
 հոգի կուսին ընդ յղանալն անժո-
 րովայնի մօր իւրոյ աննայի, առ
 'ի առնել զնա քեզ մայր անճա-
 ռանց մարդանալովդ . և ոչ թէ
 (ուց ոմանք յանզգոյշս կարծե-
 ցին) անժ սրբեալ իցէ զնա յար-
 դանդի մօրն 'ի սկզբնական մե-
 ղաց . վնդի յայտնանց 'ի հետագայ
 տունն յարի՝ այսօր ընտրեցեր ի-
 մաստուք զմայր անարատ . յոյր
 սակս գիտելի է, զի սրբելն ոչ
 միշտ նշանակէ յաղտեղուէն մաք-
 րել, ոյլ բզմ անգամ յայտ առնէ՝
 յարդարել սբ իրօք, ուց սրբա-
 րար շնորհօք ևն. ապա թէ ոչ
 բզմ անտեղիք զհետ գային, ուց
 եթէ ոք 'ի բանէս՝ * զոր հայր
 սրբեաց և առաքեաց յ՝ ॥ . 'ե

յովհ . Ժ. 36, զարատ ինչ զմտաւ
 ածէր զքսէ, որ քաւ լիցի . ապա
 անտեղի է զայսպիսի ինչ կարծել
 զկուսէն 'ի բանս շարականաց և
 այլուր . վնդի հայաստանեայց ե-
 կեղեցի զայս տարադէպ կարծիս
 զտիրամօրէնն ոչ երբէք կուլաւ կմ'
 ունի ոչ միայն 'ի շարականս , այլև
 յամ' երգս ամժածնի , մինչև նա-
 բեկացւոյն յայտյանդ իման ասել
 'ի գովէստ կուսին , * մեղուցելոյ
 կնոջն առաջնոյ առանց յանցա-
 նաց զուսակ գովէցար , և ամ' ամբ-
 ծաց ընտրուե պսակ սրբուէ դու
 դաւանեցար ॥ . [Թող զի ոչ միայն
 այլ ամ' դասք հաւատացելոց , այլև
 համօրէն հայքս ամբստ ամէ ան-
 վրէպ կատարեմք մեծաւ հանդի-
 սիւն զտօնախմբուի անարատ յու-
 թե նր : Արդ՝ զառ հսրկ սրբուէ
 կուսին չէ ինչ հարկ երկայնա-
 բանել . զի զայն դիւրաւ մարթէ
 իմաստասիրել յասացելոցս 'ի վե-
 լոյ զլիուէ շնորհաց նր . վնդի հիմն

րապոյն սրբուէ ամենօրհնեալ կու-
 սին, առաջինն է մասնաւոր թեւար-
 կուի և հանսպաղորդեան օգնա-
 կանուի այ աղբերն մաքուր սրբ-
 բուէ՝ յոր որչափ մերձեցաւ նա,
 այնչափ եղև զտագոյն սբ. և զի
 բնա սասցելոցս՝ Իժ յաւէտ լու-
 սափայլէ՝ ՚ի սրբուէ, վնկ կոյնն
 ըստ առաւել հպաւոր գոլոյն յԻժ՝
 առաւել յինքն ձգէր զնորայն սրբ-
 բուի մաքրուէ՝ քան զարդարուի
 զկարողուի և զայլ ստորագելիս,
 և այսպէ ընդ արեւելքս Իմ բու-
 րեաց շուշան մաքուր սրբութե
 կուսին՝ յորոյ ՚ի բովանդակ կեանս
 առանձին ընթերակայուի յսի զԻմ
 զգայարանս և զմիտս նք այնպիսի
 ննամով ուղղեալ կարգէր, մինչև
 զԻմ զթիւրաթեք գրգիւ ցան-
 կութե անասման հեռաւորութե
 բացէ՝ ՚ի բաց վտարել ՚ի նմանէ,
 ևս և զանխորհրդածեալ ձգմունս
 և զշարժուիս ՚ի գիանոց նախ ա-
 ռաջին անուննեալս, ույ լինէր

յաղամ յուջ քան զմեզանչեւն՝ մինչ
 դեռ կայր յանմեղուէ վիճակի :
 Արկիւն է սասաիկ սէրնք և հա
 նապազորդ եռանդն առ ամ՝ որ
 դամ սառնամանիս ձեան սաստա
 կատառոյց անմաքրուէ առեալ ՚ի
 բաց տանէր ՚ի նմանէ հեռագոյնս .
 զի զոր օրինակ՝ անըհատ տապ դի
 մագրի ձեան , և խաղառ եղծանէ ,
 սոյնս անընդհատ սէրն հակառա
 կի անմաքրուէ , և ՚ի բաց հա
 լածէ . ասեմ անընդհատ , զի թէ
 առ վայր մի ընդհատեսցի տապ
 սիրոյն , անդէն ընդ մէջ մտեալ
 հովուէ և հեռ զհեռէ եղկա
 ցեալ՝ բնառ իսկ ձիւն տեղակալէ
 անտանօր , մաւնդ թէ սառն ան
 մաքրուէ ջերմուէ ամային սի
 րոյն՝ ընդ նմին և սրբուէ ողջա
 խոհուէ ապականիչ . իսկ ՚ի կոյսն
 ամսիրուէն բոց մշտավառ էր և
 աննիսզ ժամէ ՚ի ժամ սասակա
 ցեալ , որով և սասիճան սրբուէ
 նք գրեթէ յամբառս յառաջա

ցեալ . զի ոչ երբէք անգի ետ
 խիք ցրտուե կի՛ մեղկուե . այլ
 բովանդակ հայեցունձած նի՛ միաք
 և զգայարանք և ամ՛ ակտորժակք
 անբ՛ժի՛թ յառեալ կային՛ ՚ի բանն
 մարմնացեալ ՚ի միածինն իւր յի
 քս . զի ըստ ասից կիպրիանոսի՛ ՚ի
 ճառն ծննդեան քսի , * առաջա-
 կայուի մանկանն (յսի) զհայեց-
 ուձս մերձակայիցն այնպ յինքն
 ձգէր , և զհոգիս լուսաւորեալ՝
 զսիրտս կապէր , մինչև յայն ինք-
 նաբուն բարին երևէր միախուան
 կուտակուի ամբարեաց . . . ունէր
 հոգին սբ իւր տուն և տաճար՝
 զոր առ ՚ի սրբել ՚ի պէտս իւր՝
 զարդարէր և պահէր զանգի սրբ-
 բուե իւրոյ (քի՛ զկոյսն մարիամ) ,
 և պատուէր զառադաստ սրբուե
 իւրոյ . և արգահատուէք բերկ-
 բեցուցանէին զհոգին զայն օրհ-
 նեալ . և մեծաշուք պատկառանք
 ՚ի նի՛ բնակողին զխաղալիս ցան-
 կուեցն ՚ի բաց հալածէին . օրէնք

մարմնաց օրինաց մտաց ոչինչ վնասեին, և ոչ իւրք հեատուք զհոգւոյն հանգիստ աղմկեալ խռովեին. մանուկն դիմեալ ՚ի ստինս մաքուրս հիւթ սննդեան ճգէր յինքն անտի. և անգտօմին յաղբերէ մաքուր լանջացն կերակուր զտեալ բղխէր ՚ի բերանն դերամաքուր. այլև զսիրտ մօրն անուշէր. բազմրուի ինչ՝ որ ՚ի վեր է ք զամ միտս ||. այս բանք են նք:

11. Սարիամ. այս բառ և եբրայեցերէն գրի մարիամ. այլև յոյնք ըստ եբրայեցւոց յօլով ուրէք նոյնն զնեն. թէն ոմանք յեբրայեցւոց անտի գրեն միրիամ, որ ոչ թուի լինել ուղիղ. զի եօթանասունք և նամ նախնիք առ հարկ ընթեռնուն մարիամ, և ոչ միրիամ. իսկ լատինք ըստ հանգամանաց լեզուի իւրեանց ՚ի բաց թողեալ զյեթին տառգ մ, գրեն մարիա. և թէն սոյն այս բառ ՚ի մեզ և յայլս է երբաւանկ,

այլ 'ի լեզու եբրայեցւոց է եր-
կալանկ այսմ՝ մար եամ, ուղ և առ-
մեզ ռամկօրէն լսի: Արդ՝ եբրա-
յական բառս՝ մարեամ՝ ածանցի 'ի
բառիցս՝ մօռ եամ, փ է՝ զմուռս
կի՛ գոռնուի ծովու. քանզի ա-
ւանդէն հրէայք՝ թէ 'ի ծնանիլ
անդ քեռն մովսեսի ել 'ի փարա-
ւովսէ գառն հրաման ընկեցիկ
առնելոյ զմանկունս եբրայեցւոց.
վս այն անուն նք կոչեցաւ մա-
րիամ. և կի՛ լաւ ևս՝ յառաջա-
տեսուք և կարգաւորուքն ույ այն
անուն եդաւ քեռն մովսեսի. իբր
զի յանցանել անդ հրէից ընդ ծովս
կարմիր և յընկղմիլն փարաւոնեանց
յերաւի ցուցաւ մարիամ՝ կի՛ հրէ-
արէն՝ մարեամ, փ է՝ աիրուհի
ծովու. մննդ թէ յայնժամ կո-
չեցաւ այնպիսի. զի 'ի գլ ժէ. 20.
նախ առաջին ասացաւ մարիամ,
իսկ 'ի փլ. ք. 4 և 7. ոչ անունի
մարիամ, այլ քոյր նք, փ՝ մով-
սեսի. վսզի յայն հրաշալի անցս

ունի մովսէս եղև առաջնորդ ա-
 րանց, նոյնն է մարիամ՝ կանանց,
 ըստ որում քան զնա՝ ի յաղթական
 օրհնութիւն յառաջէր մարիամ՝ ա-
 սէն զիրք. յորմէ ունիմք ի միտ
 առնուլ թէ այս մարիամ եղև
